Ազգ
Azg
25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 166(5018)
ISSN: 1829-1651

# Հաղորդագրություն

Սեպտեմբերի 16-ին Ֆրանսիայի Լիոն քաղաքում ավարտվեց ՌԱԿ 26-րդ Ընդհանուր պատգամավորական ժողովը, որի ընթացքում այլ հարցերի հետ միասին պատգամավորները անդրադարձել են նաեւ Հայաստանում ՀՌԱԿ եւ Արմենական-ՌԱԿ միավորման փաստին եւ նշել. «ՌԱԿ 26-րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը միահամուռ կերպով կ'ողջունէ Հայաստանի մէջ կեանքի կոչուիլն ու պաշտօնական ճանաչումը Ռամկավար Ազատական Կուսակցութեան: Առ այդ՝ նկատի ունենալով հայրենիքի մէջ մօտալուտ քաղաքական իրադարձութիւնները, ժողովը կը յանձնարարէ որ ՌԱԿ նորընտիր Կեդրոնական վարչութիւնը, անմիջական ապագային, կապ հաստատէ ՌԱԿ Հանրապետական վարչութեան հետ եւ համատեղ խորհրդակցութիւններով, լայն համագործակցութեան համապարփակ եզրեր որոնէ, մշակելով նաեւ անոնց անմիջական գործադրութեան միտող ծրագիրներ»:

ՌԱԿ Հանրապետական վարչությունը ողջունում է Լիոնի 26-րդ համագումարի որոշումը Մայր հայրենիքում կուսակցության միավորման նկատմամբ դրական դիրքորոշում ձեւավորելու եւ շուտափույթ կերպով բանակցությունները սկսելու համար՝ Հայաստանի եւ Սփյուռքի ՌԱԿ կառույցների միջեւ համագործակցության եւ համատեղ հետագա գործունեության նպատակով:

ՌԱԿ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

*Հ. Գ. ՌԱԿ Լիոնի համագումարի պաշտոնական հաղորդագրությանը կարելի է ծանոթանալ «Ազգի» կայքէջում:*

# Կոնդիի կապերը թուրքական լրտեսական շրջանակների հետ

## *Մեթյու Բրայզա՝ Կոնդոլիզա Ռայսի սանն ու պաշտպանյալը*

**ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը ներկայումս ներքաշված է լրտեսական սկանդալային մի միջադեպի մեջ, որը նրան կարող է զրկել առաջիկա նախագահական ընտրությունների ժամանակ փոխնախագահի թեկնածու առաջադրվելու հնարավորությունից: Պարզաբանում է հայտնի քաղաքական մեկնաբան, հեռուստատեսության լրատվական բաժնի ավագ խմբագիր Գորդոն Դաֆը Վաշինգտոնից՝ հենվելով հավաստի, բայց գաղտնի աղբյուրների վրա: Բացահայտումները հետաքրքրական են, որովհետեւ դրանցում «գործող անձինք» այս կամ այն կերպ առնչվել են Հայաստանին եւ հայերի հետ:**



### ՀԴԲ-ն ու ԱԱԽ-ն

«Հետաքննությունների դաշնային բյուրոն (ՀԴԲ) միշտ էլ փորձել է լավ գործ կատարել, պաշտպանել երկրի շահերը: Նրա աշխատակիցներից ավելի բարձր լիազորություններ ունեցող դավաճաններն են, որ խոչընդոտում են լրտեսությունների հետաքննություններին: Ցավով եմ նշում, որ սա «հին խաղ է», եւ հակահետախուզությամբ զբաղվող շատ մարդիկ երկար ժամանակ է, ինչ նվաստացած են զգում իրենք իրենց:

Երբ կրտսեր Բուշը դարձավ Մ. Նահանգների նախագահ, Կոնդոլիզա Ռայսին նշանակեց խորհրդական ազգային անվտանգության գծով: Իր մտադրությունները իրականացնելու նպատակով Ռայսը «Նոր ամերիկյան դարաշրջանի համար» ծրագրից (PNAC) մարդկանց հավաքագրեց եւ բերեց իր մոտ: Նրանց թվում էին Ռիչարդ Պեռլը, Պոլ Վոլֆովիցը եւ Ռիչարդ Կլարքը: Վերջինս դարձավ հակաահաբեկչական բաժնի պետը:

Նախքան առաջ գնալը նշենք, որ ՀԴԲ-ն իրավունք չունի հարցաքննելու Սպիտակ տան կամ Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) որեւէ աշխատակցի՝ արտաքին քաղաքականության կամ հետախուզական հարցերով առանց ԱԱԽ-ի խորհրդարանի թույլտվության: ՀԴԲ-ն, բնականաբար, առարկելի է համարում այս դրությունը: Ինչո՞ւ: Որովհետեւ ԱԱԽ-ին անդամակցելը նշանակում է անխոցելի լինել, իրավունք ունենալ հասու լինելու ամեն տեսակի դասակարգված տվյալների՝ ներառյալ «խիստ գաղտնի» եւ «հատուկ բաժանմունքի» տվյալները: ԱԱԽ-ին մաս կազմող անդամները խստագույն քննության են ենթարկվում: Նրանց անցյալն ու ներկան երկրի շահերին անսակարկ ծառայելու պատմություն պետք է լինի:

*Տես էջ 4*

#### ԳՈՒՅԺ

# Աղան արքեպիսկոպոս Պալիոզյան

**Մայր աթոռ Ս. Էջմիածնից եւ Հայ եկեղեցու Ավստրալիայի թեմական խորհրդից երեկ ստացված հաղորդագրությունները գուժեցին Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ՝ գերաշնորհ Աղան արք. Պալիոզյանի վախճանվելը:**

**Ծնվել է 1946 թ., Հալեպում: Տեղում նախակրթությունն ստանալուց հետո ընդունվել եւ ավարտել է Երուսաղեմի պատրիարքության ժառանգավորաց վարժարանը: Աբեղա էր ձեռնադրվել 1968 թ. Եղիշե պատրիարք Տերտերյանի ձեռամբ, ապա վարել տարբեր պաշտոններ պատրիարքարանում: 1971-74 թթ. որպես ազատ ունկնդիր հետեւել է Երեւանի պետհամալսարանի հայոց լեզվի եւ գրականության դասընթացներին: Երուսաղեմ վերադարձին վարել է Ժառանգավորաց վարժարանի տեսչի պաշտոնը մինչեւ Սիդնեյ (Ավստրալիա) մեկնելը, որտեղ եղել է առաջնորդական փոխանորդ՝ Գարեգին արք. Գազանճյանի (հետագայում՝ Կ. Պոլսո հայոց պատրիարք) առաջնորդությամբ: 1991 թ. երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն հայոց հայրապետի տնօրինությամբ նշանակվել է Հնդկաստանի եւ Ծայրագույն Արեւելքի երկրների պատվիրակ, իսկ ավելի ուշ՝ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի թեմի առաջնորդ:**



**Անդամ էր Մայր աթոռի Գերագույն հոգեւոր խորհրդի:**

# ՏԻՄ ընտրություններում ընտրողների պասիվություն է նկատվել

Կիրակի ՏԻՄ ընտրություններ էին Արագածոտնի, Կոտայքի, Տավուշի, Վայոց ձորի եւ Գեղարքունիքի մարզերի 318 համայնքում, 262 համայնքում ղեկավար է ընտրվել, 281-ում է՝ ավագանի: Այս անգամ ընտրողներն առանձնապես ակտիվ չեն եղել, գրանցվել է մոտ 30 տոկոս մասնակցություն: Նախնական տեղեկություններով՝ առավելաբար հաղթել են ՀՀԿ թեկնածուները: Մի քանի հետաքրքրական տվյալ. Սեւանում հաղթել է անմրցակից մնացած Ուդո մականունով Ռուդիկ Ղուկասյանը, Աշտարակում՝ «Մետեքսիս» ՍՊԸ- տնօրեն Արմեն Անտոնյանը, որը նոր մարդ է եւ, ըստ տարբեր տեղեկությունների, իշխանական շերտերի թեկնածուն է, Աբովյանում Գագիկ Ծառուկյանի փեսա Կարապետ Գուլոյանը վերընտրվել է: Մարտունիում ՀՀԿ-ական Բագրատ Հարությունյանն է դարձել քաղաքապետ, Վարդենիսում Վոլոդյա Խլոյանը (ՀՀԿ), Դիլիջանում՝ Արմեն Սանթրոսյանը (ՀՀԿ): **Ս. Խ.**

# Հանրապետական մաղթանք պատարագի ավարտին

**Սեպտեմբերի 23-ին՝ Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցում պատարագի ավարտին կատարվել է հանրապետական մաղթանք՝ Հայաստանի Հանրապետության անկախության 21-րդ տարեդարձի առթիվ: Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը շնորհավորել է ներկա հավատացյալներին ու Հայաստանին մաղթել բարօրություն եւ հզորություն: Առաջնորդ հայրը նաեւ երախտագիտություն է հայտնել Հայաստանի պետությանը՝ Սիրիայի դժվարին պայմաններում սիրիահայությանը նեցուկ կանգնելու համար:** **Ի. Պ.**

#### ՀԱՄԱՌՈՏ

# Սամվել Ալեքսանյանի դեմ բողոքը ԱԺ էթիկայի հանձնաժողովն ընդունեց վարույթ

**Ազգային ժողովի էթիկայի հանձնաժողովը երեկ փակ նիստ անելով՝ որոշեց վարույթ ընդունել ՀԱԿ ակտիվիստ Վարդգես Գասպարիի այն բողոքը, որը վերաբերում է ԱԺ ՀՀԿ-ական պատգամավոր Սամվել Ալեքսանյանի պահվածքին, որի թիկնապահն, ըստ Գասպարիի բողոքի, հունիսի 21-ին հրել-գցել է նրան, իսկ ինքը՝ Ս. Ալեքսանյանը, խլել է Ռուբեն Հայրապետյանին պատկանող «Հարսնաքար» հյուրանոցում կատարված միջադեպին վերաբերյալ բողոքի պաստառը: Բողոքը վարույթ ընդունելուց հետո 30 օրում պետք է քննարկվի, զեկուցող է նշանակված ՀՅԴ-ից Արծվիկ Մինասյանը: Հիշեցնենք, որ էթիկայի հանձնաժողովի նախագահն է ՀԱԿ-ը ներկայացնող Նիկոլ Փաշինյանը: Էլի հիշեցնենք, որ մեծամասնական կարգով Նիկոլ Փաշինյանն ու Սամվել Ալեքսանյանը մրցակցում էին նույն ընտրատարածքում:** **Ս. Խ.**

# Ազգային ժողովում սկսեց քննարկվել 2011-ի բյուջեի կատարողականը

**Երեկ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում սկսվել են 2011 թ. բյուջեի կատարողականի քննարկումները: Ելույթներ են ունեցել վարչապետ Տիգրան Սարգսյանը, գլխավոր գանձապետ Ատոմ Ջանջուղազյանը, Հայաստանի կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանը: Կատարողականի վերաբերյալ եզրակացություն է ներկայացրել Վերահսկիչ պալատի նախագահի տեղակալ Լեւոն Յոլյանը: Մանրամասներ չենք ներկայացնի քննարկումից, քանի որ հաջորդ շաբաթ այս բոլորը քննարկվելու է նաեւ ԱԺ լիագումար նիստում, եւ ըստ տեղեկությունների՝ բացի ՀՀԿ-ից, մյուս խմբակցությունները պատրաստվում են քննադատել կատարողականը:** **Ս. Խ.**

# 14 հայ գիտնականներ մասնակցել են «Rover Curiosity» տիեզերանավի պատրաստմանը

Հպարտությամբ տեղեկացնում ենք, որ 14 հայ գիտնականներ մասնակցել են օգոստոսի 5-ին Հրատ (Մարս) մոլորակի վրա հաջող վայրէջք կատարած, NASA-ի արձակած տիեզերանավի պատրաստմանը:



«Rover Curiosity» («Հետաքրքիր թափառականը») անվանված բավական բարդ սարքավորումներով հագեցած տիեզերանավի առաքելությունն է ոչ միայն Մարսի մակերեսի նկարներ ուղարկել երկիր, այլեւ հողի նմուշներ վերցնել եւ տարրալուծել՝ իմանալու համար, թե այնտեղ կենդանի մանրէներ գոյություն ունե՞ն կամ ունեցե՞լ են անցյալում:

Սարքի ամենահետաքրքրական կարողությունը պլուտոնիում կոչված ռադիոակտիվ նյութից էլեկտրականություն ստանալու հնարավորությունն է, որն ապահովելու է սարքի երկարաժամկետ (երկրային 687 օր) դեգերումները այդ մոլորակի վրա:

Ըստ Կանադայում հրատարակվող ՌԱԿ-ի «Ապագայ» պաշտոնաթերթի լրատվության, «Հրատի գիտաշխատանոցի» (Mars science laboratory) անձնակազմում գործել են գիտության տարբեր բնագավառների 14 հայ գիտնականներ, որոնց անունները կհրապարակենք ստորեւ՝ մաղթելով նորանոր բարձունքներ:

Արբի Կարապետյան (խմբի ղեկավար), Ավո Դեմիրճյան, Վաչե Որբերյան, Ալֆրեդ Քաշաք, Ֆելիքս Սարգսյան, Հրայր Այնթապյան (բոլորը էլեկտրոնիկայի բաժնից), Կարեն Խանոյան եւ Ռիչարդ Օհանյան (վայրէջքի ռադարային դրության բաժնից), Սերժիկ Ծատուրյան եւ Վազրիկ Կարախանյան (արձակման բաժնից), Գայանե Գազարյան (կենսաբանության բաժնից), Հենրի Հարությունյան (թռիչքի համակարգչային բաժնից), Արմեն Դուրյան (մեխանիզմի եւ փորձարկության բաժնից) եւ Զավեն Գործյան (համակարգչային անիմացիայի բաժնից):

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Տնտեսվարողները պետք է ավարտեն քաղաքի կենտրոնում կիսատ թողած շինարարությունները




Անցած շաբաթ Երեւանում տեղի ունեցավ իրադարձություն, որը կարծես թե այնքան էլ չընկալվեց կամ չլուսաբանվեց զանգվածային լրատվամիջոցներում, սակայն իր բնույթով բացառիկ էր, որովհետեւ առաջին անգամ պետությունը խոսեց ոչ թե աղքատից ունեցվածք խլելու ու հերթական օլիգարխին տալու, այլ հենց օլիգարխի մասնավոր սեփականությունը բացառիկ գերակա շահ ճանաչելու մասին: Խոսքը Երեւանի գլխավոր ճարտարապետ **Նարեկ Սարգսյանի** ասուլիսի մասին է, որտեղ վերջինս ներկայացրեց այն տնտեսվարողների ցանկը, ովքեր սկսել եւ չեն ավարտում քաղաքի կենտրոնում սկսած կառուցապատումը՝ շինարարությունը, այդ կերպ ավելի խաթարելով քաղաքի կենտրոնի առանց այդ էլ խաթարված տեսքը: Ընդ որում, կառուցապատող ընկերությունների մեջ կան այնպիսի անձանց պատկանող ՍՊԸ-ներ, որ ժամանակին քաղաքային իշխանությունները ոչ թե ռիսկ չէին անի ճանաչել նրանց տարածքը բացառիկ գերակա շահ, այլ անգամ կվախենային մի ստուգող ուղարկել՝ պարզելու, թե ինչպես են պահպանվում քաղաքաշինական նորմերը: Նման վախենալու գիգանտներից է «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ընկերությունը: Ընկերությունը քաղաքի կենտրոնում երկար տարիներ ի վեր սկսել ու չի ավարտում 1857 քմ տարածք զբաղեցնող իր շինարարությունը՝ չնայած վերցված պարտավորություններին: Իհարկե, դեռ հարց է, թե ինչու Գագիկ Ծառուկյանը չի ցանկանում ավարտել իր հերթական էլիտար շենքը, սակայն փաստ է, որ քաղաքային իշխանությունները նրան ու մի քանի նմանատիպ այլ գործարարների, որոնց կանդրադառնանք հետագայում, զգուշացրել են, որ շինարարությունը պետք է ավարտել, եթե ոչ՝ կառավարությանը կխնդրեն այդ տարածքները ճանաչել բացառիկ գերակա շահ:

Զուտ սոցիալական արդարության տեսանկյունից ազնիվ է, որ պետությունը սկսում է սեփականության վերաբաշխման գործընթաց: Գաղտնիք չէ, որ ֆինանսական միջոցների 99 տոկոսը Հայաստանում կուտակված է մի քանի օլիգարխների ձեռքում, ովքեր ոչ միայն չեն ցանկանում հրաժարվել իրենց՝ նախկինից ժառանգած բիզնես լգոտաներից, այլ նաեւ մեծ հաճույքով սաբոտաժի են ենթարկում ձեռք բերված պայմանավորվածությունները, խախտում են պայմանագրերը՝ այս կերպ ցույց տալով իրենց ամենակարողությունը: Որքա՞ն է արդար, երբ վերջին 15 տարիներին պետությունը սկսեց խլել աղքատի ունեցվածքը՝ Դալմայի այգիները, Հյուսիսային պողոտայի տեղում գտնվող տարածքները, Բուզանդի կամ Արամի փողոցի շենքերը՝ այդպես էլ չտալով պատշաճ փոխհատուցում՝ թողնելով նրանցից շատերին դրսում, իսկ նույն այդ երկարուձիգ տարիների ընթացքում ռիսկ չարեց կամ չուզեց նեղացնել գեթ մեկ օլիգարխի՝ չնայած վերջիններիս կատարած բազմաթիվ տնտեսական հանցագործություններին, որոնց մասին մեկ անգամ չէ, որ խոսվել է մամուլում ու մնացել անարձագանք:

Պարզ է, որ այս նախազգուշացումից հետո օլիգարխներին սպասարկող լրատվամիջոցները եւ խոսափողները կսկսեն բարձրաձայնել աղաղակող անարդարության, անազնիվ կերպով մասնավորից խլելու փորձի մասին, կքաղաքականացնեն խնդիրը: Բայց լինենք անկեղծ. եթե այս ամենի մեջ կա անգամ քաղաքական մասնաբաժին, ապա մեր երկրի վարքուբարքի չգրված կանոնների համաձայն անգամ արդար է: Նրանք էլ են ժամանակին շատերից շատ բան խլել, ուստի մեկ անգամ էլ թող ճաշակեն այդ նույն զգացումը նաեւ սեփական մաշկի վրա: Համենայն դեպս, եթե օլիգարխների սեփականությունը ճանաչվի բացառիկ գերակա շահ՝ ոչ սոված կմնան, ոչ էլ դրսում կհայտնվեն այնպես, ինչպես դրսում են նրանց հարստահարման հետեւանքով անտուն մնացած անձինք:

ՆԱԻՐԱ ՈՒՐԻԽԱՆՅԱՆ

# Դամասկոսի Ազգային թարգմանչաց ճեմարանը վերաբացեց դռները



Դամասկոսի Ազգային սրբոց թարգմանչաց ճեմարանը վերաբացեց իր դռները 2012-2013 թվականների ուսումնական տարեշրջանի համար, սեպտեմբերի 18-ին կատարված այդ արարողության ժամանակ թեմի առաջնորդ Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը փոխանցեց իր օրհնությունն ու պատգամը: Այս տարի ճեմարանը առաջին անգամ պատրաստում է 12-րդ դասարանցիների: Թեմի առաջնորդը մաղթեց, որ նրանք հետագայում արժանանան լավագույն ասիճանների ու դառնան ազգօգուտ գործիչներ: Աշակերտներին եւ ուսուցիչներին հաջողություն մաղթեցին նաեւ ճեմարանի հոգաբարձության ատենապետ, բժիշկ Հարություն Գրիգորյանը, տնօրեն Հակոբ Տեր-Վարդանյանը եւ պետական տնօրեն տիկին Ֆիտաա էլ Աթուանը: Ի. Պ.

# Արա Գյուրջյանը՝ Գնումների աջակցման կենտրոնի պետ

Ինչպես տեղեկացանք կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ Արա Գյուրջյանը նշանակվել է «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության պետի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչեւ սահմանված կարգով «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության պետի պաշտոնի համար մրցույթով հաղթող ճանաչված մասնակցին նշված պաշտոնում նշանակելը:



# Հայոց ցեղասպանության վերաբերյալ դասընթացներ Գերմանիայում

ՀՀ կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանն** ընդունել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սաքսոնիա-Անհալթ երկրամասի մշակույթի եւ կրթության նախարար **Շտեֆան Դորգերլոհի** գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում նախարար Արմեն Աշոտյանը տեղեկացրել է, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ մի շարք գործընկերների հետ մշակվել է գաղափար՝ եվրոպական դպրոցական ծրագրերում Հայոց ցեղասպանության վերաբերյալ դասընթացներ ներառելու ուղղությամբ:

Ա. Աշոտյանը, անդրադառնալով գործընթացի նպատակին, ասել է, որ անհրաժեշտ է Եվրոպայի երիտասարդ սերնդին պատմել 20-րդ դարի մեծագույն ոճիրներից մեկի մասին եւ կանխարգելել ու բացառել հետագայում նման հանցագործությունների կրկնությունը. «Որոշ եվրոպական երկրներ արդեն իսկ ցեղասպանության մասին նյութերը ներառել են հանրակրթական ծրագրերում: Հաշվի առնելով, որ տարիներ առաջ Գերմանիայի Բունդեսթագը տվել է իր քաղաքական գնահատականը նշված իրադարձությունների վերաբերյալ, կարծում եմ՝ հարկ է երկրի քաղաքական դիրքորոշումը փոխանցել նաեւ երիտասարդ սերնդին»:

Իսկ Շտեֆան Դորգերլոհը դրական է գնահատել նշված նախաձեռնությունը. «Հարեւան Բրանդենբուրգի երկրամասում արդեն օժանդակ ուսումնական նյութեր են պատրաստվել, որտեղ մարդկության դեմ նմանատիպ այլ ոճիրների շարքում հանգամանալից ներկայացված է նաեւ Հայոց ցեղասպանությունը»:

Շտեֆան Դորգերլոհը նշել է նաեւ, որ նշված քայլերը ոչ միայն հիշեցնում են ապագա սերունդներին վերոնշյալ ոճրագործությունների մասին, այլ նաեւ նպաստում են ժողովուրդների երկխոսությանը եւ հաշտեցմանը՝ որպես օրինակ բերելով գերմանա-ֆրանսիական հաշտեցման պայմանագիրը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Ցույց՝ ի պաշտպանություն Վահագն Չախալյանի

**Սեպտեմբերի 23-ին Ախալքալաքում կայացել է ցույց՝ ի պաշտպանություն ջավախահայ քաղաքական գործիչ, «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքի առաջնորդ Վահագն Չախալյանի:**

**Ախալքալաքի կենտրոնական՝ Մաշտոցի հրապարակում հավաքված հարյուրավոր ջավախահայեր դատապարտել են Վրաստանի քրեակատարողական հիմնարկներում բանտարկյալների նկատմամբ կատարվող խոշտանգումները եւ պահանջել ազատ արձակել Վահագն Չախալյանին:**

**Ցույցը նախաձեռնող «Միասնական Ջավախք» դաշինքի անդամները հայտարարել են , որ իշխանություններից դրական արձագանք չստանալու դեպքում կշարունակվեն Վահագն Չախալյանի պաշտպանությանն ուղղված միջոցառումները:**

**Ցույցի վերջում ընդունվել է կոչ՝ ուղղված Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն:**

Ի. Պ.

# Եզդիների առաջնորդ Միր Թահսին Բեգը կայցելի Հայաստան

Մի քանի օրից Հայաստանում կլինի եզդիների առաջնորդ Միր Թահսին Բեգը՝ «**Ազգին**» տեղեկացրեց «Սինջար» եզդիների ազգային միավորում հասարակական կազմակերպության նախագահ **Բորիս Թամոյանը** եւ ավելացրեց. «Այցը նշանավորվում է նրանով, որ Հայաստանում օծվելու է աշխարհում եզդիական կրոնի եզակի տաճարներից մեկը: Թահսին Բեգի Հայաստան կատարվելիք այցը եզդիական համայնքում տարաբնույթ խոսակցությունների առիթ է դարձել: Հատկապես բազմաթիվ խոսակցություններ են շրջանառվում, որ Թահսին Բեգը Իրաքում քրդերի վարած հակաեզդիական քաղաքականության հանդեպ անտարբեր է եւ չի պաշտպանում եզդիների իրավունքները: Այս խոսակցությունները տարածված են նաեւ Իրաքի եզդիների շրջանում: Չնայած այս խոսակցություններին, Միր Թահսին Բեգը վայելում է աշխարհի եզդիների մեծամասնության հարգանքը: Սակայն սա չի նշանակում, թե Թահսին Բեգը, լինելով Հայաստանում, չպետք է ջանքեր թափի, որպեսզի հերքվեն իր քրդամետ լինելու մասին խոսակցությունները: Քրդական հարցում՝ Հայաստանում բնակվող եզդիների մեծամասնությունը համակարծիք է, եւ միանշանակ չեն ընդունի այն առաջնորդին, ով հարում է քրդական կողմին: Իսկ առաջնորդը, ում չի ընդունում ժողովուրդը, հավասարազոր է ոչնչի: Ինչեւիցե, մի քանի օր է մնացել այցին եւ կարճ ժամանակ՝ անձամբ Միրից ստանալու մեր բոլոր հարցերի պատասխանները»:

Ս. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Հարսնաքար»-ի գործ. նիստ երկրորդ. հետաձգված դատավարություն

Երեք հսկայական հատոր, որոնցից յուրաքանչյուրը կազմում է 400 էջ։ Սա «Հարսնաքար»-ի գործով նախաքննության ընթացքում կազմված նյութն է։ Մինչեւ հոկտեմբերի 3-ը ամբաստանյալ Արման Յաշայի Խաչատրյանի փաստաբան Ավագ Լալայանը պետք է ուսումնասիրի ամբողջ գործը, որպեսզի կարողանա հավուր պատշաճի ներգրավվել դատական գործընթացում։

Եթե նախորդ դատական նիստը հետաձգվեց Արման Խաչատրյանի՝ փաստաբան չունենալու պատճառով, այս անգամ նիստը հետաձգվեց փաստաբանի՝ գործին ծանոթ չլինելու պատճառով։ Մինչ դատական նիստի հետաձգումը տուժող կողմից Գառնիկ Ավետյանի իրավահաջորդ Վարդան Գրիգորյանը դատարան ներկայացրեց մի հայտարարություն, որը վերաբերում է երիտասարդների մի խմբի, որ արդեն երկրորդ նիստին է մասնակցում։ Գրիգորյանի ներկայացմամբ՝ երիտասարդները ոստիկաններ են, փաստաբանի խոսքերով՝ իրենց տեղեկացրել են, որ երիտասարդները անվտանգությունն ապահովելու համար են եկել։ «Սակայն ինչո՞ւ համազգեստով չեն եւ ի՞նչից պետք է ապահովեն ներկաներին երիտասարդները», հարցրեց փաստաբանը։ Նախագահող դատավոր Դավիթ Հարությունյանն ասաց, որ դատական նիստը բաց է, եւ դատարանի իրավասությունների մեջ չի մտնում, թե ովքե՞ր են գալիս դատարան, ի՞նչ պաշտոն ունեն եւ ինչպիսի՞ հագուստ են կրում։

Քրեական գործում որպես պետական մեղադրող ներկայացված է ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների վարչության պետի տեղակալ, դատախազ Արթուր Դավթյանը, ով պահանջեց, որ դատական հաջորդ նիստերին ներկա լինեն նաեւ գործով տուժողներն ու տուժողի իրավահաջորդը։ Դատական այս նիստին էլ ներկայացված էին գործով ամբաստանյալներ Գարիկ Մարգարյանը, Նորայր Հայրապետյանը, Դավիթ Ադամյանը, Արթուր Բաբլոյանը, Արման Բաղդասարյանն ու Արման Խաչատրյանը։

Ի տարբերություն դատական նախորդ նիստի՝ այս անգամ լրատվամիջոցների եւ ներկաների պահանջը բավարարվել էր. բարձրախոսների եւ դինամիկների հարցը կարգավորվել էր։

Թեպետ նախանշված էր, որ դատական նիստին զուգահեռ Երեւանի Ավանի եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի բակում պետք է պիկետ անցկացվեր, սակայն արտառոց ոչինչ տեղի չունեցավ։

Դատարանի բակում ընդամենը մի քանի հոգի էին՝ պահանջելով պատժել մարդասպաններին։ Դատական նիստին ներկա էին նաեւ «Նոր Ժամանակներ» կուսակցության նախագահ Արամ Կարապետյանը, «Ժառանգություն» կուսակցության նախագահ Րաֆֆի Հովհաննիսյանն ու ազատամարտիկ Ժիրայր Սեֆիլյանը։

Հիշեցնենք, որ «Հարսնաքար» ռեստորանը պատկանում է ՀՀ ԱԺ պատգամավոր, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանին։ Հենց այդտեղ տեղի ունեցած ծեծկռտուքի հետեւանքով, դեպքից 11 օր անց մահացել էր ռազմական բժիշկ, բուժծառայության մայոր Վահե Ավետյանը, ինչը բողոքի հսկայական ալիք բարձրացրեց։

Այդ ընթացքում Ազգային ժողովում փորձ արվեց արտահերթ նիստ գումարել եւ քննարկել հարցն ու Հայրապետյանին զրկել մանդատից, սակայն պատգամավորների անհրաժեշտ քանակ չապահովվելու պատճառով նիստը տապալվեց։ Ավելի ուշ, ռեստորանի սեփականատերը հանդիպեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, ինչից հետո հայտարարեց, որ վայր է դնում պատգամավորական մանդատը։ Մանդատը վայր դնելու մասին հայտարարությունը ԱԺ-ում կարդաց Հայրապետյանի կուսակից, ԱԺ փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովը. եթե մինչեւ սեպտեմբերի 28-ը Հայրապետյանը միտքը չփոխի, ապա կզրկվի պատգամավորական մանդատից եւ անձեռնմխելիությունից։

«Հարսնաքար»-ի գործով Հայրապետյանը ոչ վկա է, ոչ էլ մեղադրյալ. փաստեր չկան։ Համաձայն նախաքննության, Հայրապետյանը դեպքի ժամանակ չի եղել ռեստորանում։ Նա հարցաքննվել է երկու անգամ, ինչը կընթերցվի դատարանում։ Ոստիկանությունում հայտարարեցին, որ գործի առնչությամբ ստուգվել են նաեւ Հայրապետյանի հեռախոսից մուտք գործած եւ կատարված զանգերը։ Ըստ մի շարք հրապարակումների, Գարիկ Մարգարյանը դեպքի վերաբերյալ զանգել է Հայրապետյանին, ումից ստացել է հանձնարարություն՝ պատժել այցելուին։

Հայրապետյանը հերքում է այդ լուրերը, հեռախոսազանգերի վերաբերյալ նյութն էլ հրապարակված չէ։ Հավանաբար նույնպես կհրապարակվի դատարանում։

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆ

# Ովքեր են հարստանում մանկապարտեզի երեխաների հաշվին



Ինչպես տեղեկացանք տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովից, հանձնաժողովն ավարտել է ուսումնասիրությունները հանրապետության 575 մանկապարտեզներում պետական գնումների շրջանակում ձեռք բերվող սննդամթերքի ոլորտում։ Բացահայտվել են ոչ միայն մրցութային կանոնների խախտման, այլ նաեւ մատակարար ընկերությունների անբարեխիղճ վարքագծի եւ խաբեության տասնյակ դեպքեր։

Մասնավորապես բացահայտվել են դեպքեր, երբ տնտեսվարողները մանկապարտեզների հետ կնքել են կարագի մատակարարման պայմանագիր, սակայն կարագի փոխարեն երեխաների սննդի համար տրամադրել են բուսաստերուցքային խառնուրդ՝ սփրեդ կամ մարգարին։ Ավելին, պետության կողմից երեխաների համար տրամադրված սննդի գումարով գնվել են այնպիսի ապրանքներ, որոնց օգտագործումը մանկական սննդում պարզապես անհնար է պատկերացնել։ Օրինակ՝ սուրճ, ապուխտ, սուջուխ, ձկան եւ մսի պահածոներ, կծու պղպեղ եւ այլն։

Հստակապես մարզերում բացահայտվել են նաեւ այնպիսի դեպքեր, երբ մանկապարտեզների տնօրենները գնել են հենց սփրեդ, քանի որ հաշիվ-ապրանքագրերում հստակ նշված է այդ մասին։ Այսինքն, նրանք իմացել են սփրեդի ձեռքբերման մասին։ Բացի դրանից, մի շարք ընկերություններ, մանկապարտեզների տնօրենների փոխադարձ համաձայնությամբ, սննդի մատակարար են դարձել առանց մրցույթների անցկացման։

Մի շարք տնտեսվարողների վաճառքի փաստաթղթերից ակնհայտ է դառնում, որ վերջինները մանկապարտեզներին «կարագ» են մատակարարել 1000-1600 դրամով, երբ այդ նույն ժամանակահատվածում կարագի շուկայական գինը 2 անգամ թանկ է եղել, ինչը փաստում է, որ վաճառված ապրանքը կարագ չէ։ Հանձնաժողովի ուսումնասիրություններով բացահայտված օրինախախտ ընկերություններն են. Լուսաշխարհ ՍՊԸ, ԱԲԱՖ ՍՊԸ , Սեար գրուպ ՍՊԸ, Երեքնուկ ՍՊԸ, Այգաբեր ՍՊԸ, Կրիստալ ՍՊԸ, Աբովյան Սիթի ՍՊԸ, Արմեն ԱՔԷ ՍՊԸ, Արարտ ՍՊԸ, Էթյունի ՍՊԸ, Ոսկե խարիսխ ՍՊԸ, Ամալյա Ներկարարյան ԱՁ, Թամարա Ջոհրաբյան ԱՁ, Գառնիկ Խաչիկյան ԱՁ, Վոլոդյա Հովսեփյան ԱՁ,Կարապետ Կարապետյան ԱՁ, Վոլոդյա Փանոսյան ԱՁ, Մանուկ Մարգարյան ԱՁ, Նարինե Վիրաբյան ԱՁ, Նվեր Սեւումյան ԱՁ, Ռիմա Տոնոյան ԱՁ, Ռիմա Մարգարյան ԱՁ, Երեմ Ասատրյան ԱՁ, Արամայիս Գեւորգյան ԱՁ, Խանում Սիմոնյան ԱՁ, Արմեն Հովեյան ԱՁ, Արման Համբարձումյան ԱՁ։

Հանձնաժողովը անընդունելի եւ դատապարտելի համարելով տնտեսվարողների նման վարքագիծը, քանի որ խնդիրն առնչվում է մանկահասակ երեխաներին, որոշեց կիրառել անբարեխիղճ մրցակցության համար օրենսդրությամբ նախատեսված առավելագույն պատժաչափ՝ տվյալ տնտեսվարողի տարեկան հասույթի 1 տոկոսի չափով։

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Գյումրու նոր ավագանին դատապարտված է ավելի լավ աշխատելու

*«Քաղաքը մերն է» քաղաքացիական նախաձեռնությունը դրան հետամուտ է լինելու*

Շիրակի մարզի այլ համայնքների թվում այս ամիս Գյումրիում կայացած ՏԻՄ ընտրությունները, ընտրողների համեմատական պասիվությամբ հանդերձ, մի շատ կարեւոր դրական կողմ ունեին։ Ի տարբերություն նախորդ՝ չորս տարի առաջվա տեղական ընտրությունների, այս անգամ չկար քաղաքապետի թեկնածուների միջեւ սուր կլանային պայքար՝ քրեահակ տարրի հնարավոր ակտիվ դերակատարության սպասումով ու դրանից բխող ընդհանուր անառողջ հոգեբանական լարվածությամբ։ Ընտրողը վերջապես հանգիստ շունչ էր քաշել. ե՛ւ վերջին հաշվով քաղաքապետ ընտրված Սամվել Բալասանյանը, ե՛ւ նրա երեք մրցակիցները հանգիստ, քաղաքակիրթ պայքար էին մղում, ու այդ հանգստությունը փոխանցվել էր նաեւ ընտրական հանձնաժողովների անդամներին ու ամենակարեւորը՝ ընտրողին։

Հիմնական ինտրիգն այս անգամ ավագանու անդամության 21 տեղերի համար պայքարն էր։ Իսկ ՏԻՄ այս ընտրարշավի առանձին ուշադրության արժանի նորությունը ընտրությունից ամիսներ առաջ ձեւավորված, Գյումրու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից ու մտավորականներից կազմված «Քաղաքը մերն է» քաղաքացիական նախաձեռնությունն էր, նրա կազմից նոր ավագանու անդամության յոթ թեկնածուների միասնական թիմի առաջադրումն ու քաղաքի զարգացման միասնական ծրագրով հանդես գալը, որը թերեւս Հայաստանում առաջին նման դեպքն էր։ Սակայն քվեարկության արդյունքներով այդ միասնական թիմից համայնքային ավագանու անդամ ընտրվեց միայն մեկ մարդ։ Նախաձեռնության բոլոր յոթ թեկնածուներին միասին ձայն տվեց քվեարկության մասնակիցների մոտ 7,2 տոկոսը։

Անցած ուրբաթ հրավիրած մամուլի ասուլիսում գնահատելով ընտրության արդյունքներն ու ներկայացնելով «Քաղաքը մերն է» քաղաքացիական նախաձեռնության հետագայի մտադրությունները, վերջինիս ներկայացուցիչներն ընդունեցին, որ նախաձեռնության գաղափարներն ու ծրագրերը կամ ընտրողի կողմից մերժվեցին, կամ իրենք չկարողացան դրանց կարեւորության եւ օգտակարության նկատմամբ արթնացնել գյումրեցիների հավատը։ Բացասական գնահատելով կատարված ընտրությունն ու ընտրված համայնքային ավագանու որակական կազմը, բանախոսները նշեցին, թե իրենցից յուրաքանչյուրը եւ նախաձեռնությունն ընդհանրապես չի կարող անտարբեր լինել Գյումրու ավագանու կայացնելիք որոշումների նկատմամբ եւ ավագանու իրենց անդամի միջոցով ամեն ինչ անելու են դրանց վրա դրական ազդեցություն ունենալու համար։

«Քաղաքը մերն է» քաղաքացիական նախաձեռնությունը, ինչպես նշվում է լրատվամիջոցներին տրամադրված հաղորդագրությունում, հավատարիմ է մնալու իր որդեգրած գաղափարախոսությանը, ընդունված արժեքներին եւ հետեւողականորեն շարունակելու է իրականացնել Գյումրու բարեփոխմանն ու զարգացմանն ուղղված իր կարեւորագույն առաքելությունը։ Նախաձեռնության անդամները բոլոր հնարավոր միջոցներով հետամուտ են լինելու երկարատեւ եւ բուռն մասնագիտական ու ոլորտային քննարկումների արդյունքով ստեղծված փաստաթղթի՝ Գյումրու զարգացման իրենց մշակած ծրագրի դրույթների իրականացմանը։

Գ. Մ.

# Արդյունաբերողների եւ գործարարների միությունը կօգնի սիրիահայերին

Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների (գործատուների) միության նախագահ Արսեն Ղազարյանը երեկ միության անունից սիրիահայերի վերաբերյալ հայտարարություն էր տարածել։ Հայտարարության մեջ մասնավորապես մտահոգություն է հայտնվում Սիրիայում մեր հայրենակիցների ճակատագրով, որոնք հայտնվել են դժվարին կացության մեջ։ Ուստի միության անդամ «գործարարները պատրաստակամություն են հայտնել եղբայրական ձեռք մեկնելու սիրիահայերին, ովքեր Սփյուռքում միշտ էլ զորավիգ են եղել Հայաստանում իրականացվող հայրենաշեն ծրագրերին»։ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների (գործատուների) միության նախագահության նիստը սիրիահայերին աջակցելու վերաբերյալ գործնական որոշում է ընդունել։

- Տրամադրել աշխատատեղ կամ հնարավորության դեպքում ստեղծել նոր աշխատատեղեր սիրիահայերի համար։
- Խորհրդատվությամբ, միության կապերն ու մյուս լծակները օգտագործելով՝ աջակցել սիրիահայ գործարարներին Հայաստանում բիզնես հիմնելու, նրանց գործող բիզնեսը արտերկրից Հայաստան տեղափոխելու գործում։
- Աջակցել միության անդամ ընկերություններում ներդրումներ կատարել ցանկացողներին, նպաստել նրանց ինտեգրմանը Հայաստանի գործարար եւ բարոյահոգեբանական մթնոլորտին։
- Կազմակերպել մասնագիտական սեմինարներ կամ վերաորակավորման ուսուցման դասընթացներ սկսնակ գործարարների համար։
- Գործարարությամբ զբաղվողներին ծանոթացնել Հայաստանի տնտեսական օրենսդրությանը, փոփոխություններին՝ նոր իրավիճակներում արագ եւ ճիշտ կողմնորոշվելու համար։
- Անհրաժեշտության դեպքում հնարավորության սահմաններում աջակցել սիրիահայ ուսանողներին կրթաթոշակների վճարման գործում։

Նշվում է, որ միությունում ստեղծվել է աշխատանքային խումբ, համակարգվում են բոլոր տեղեկությունները եւ առաջարկությունները սիրիահայերի խնդիրները լուծելու համար։ Աշխատանքային խումբը համագործակցելու է Հայաստանի սփյուռքի եւ արտաքին գործերի նախարարությունների եւ խնդրին առնչվող պետական ու հասարակական տարբեր կառույցների հետ։

Ա. Մ.

# Կոնդիի կապերը թուրքական լրտեսական շրջանակների հետ

*Մեթյու Բրայզա՝ Կոնդոլիզա Ռայսի սանն ու պաշտպանյալը*

*1-ին էջից*

Ռայսի հավաքագրած մարդկանցից ոչ մեկը վետերան նվիրյալների թվին չէր պատկանում: Նրանց մեծ մասը Իսրայելի քաղաքացիներ էին: Ռայսը Սպիտակ տունն էլ լցրել էր նախկինում դատապարտված հանցագործներով եւ լրտեսներով: 2002-ին նա, իր լիազորությունների բոլոր սահմանները անցնելով, խոչընդոտեց Սպիտակ տան մեջ գործող լրտեսական խոշոր գործողության հետաքննությանը: Դրա բացահայտումն այս օրերին նրան դարձնում է քաղաքականապես անվստահելի անձնավորություն, որը լուրջ խախտումներ է թույլ տվել ազգային անվտանգության քաղաքականության մեջ: Նրա գործողությունները մեծ մասամբ կապված են տխրահռչակ Մեթյու Բրայզայի, իսկ ավելի կոնկրետ՝ վերջինիս հովանավորելու հետ: Բայց նախ հակիրճ՝ մյուսների մասին:

## Հանցագործ խմբի ներթափանցումը

Ռիչարդ Պեռլն արդեն իսկ (ԱԱԽ անդամ դառնալուց առաջ) մեղադրվել էր լրտեսության մեջ: «Իշխանության գինը» (Price of Power) գրքում Սեյմուր Հերշը (Seymour Hersh) նշում է այդ մասին.

«Պատահմամբ լսել էին, որ սենատոր Ջեքսոնի արտաքին քաղաքականության գծով օգնական Ռիչարդ Պեռլը ինչ-որ մեկի հետ քննարկում էր խիստ գաղտնի մի տեղեկատվություն, որը նրան էր փոխանցել ԱԱԽ-ի անձնակազմից մեկը: (Հենրի) Քիսինջերը Հալդեմանին է փոխանցում ՀԴԲ-ի գաղտնի ձայնագրությունը… եւ պահանջում պարզել, թե ով կարող է ԱԱԽ-ից Պեռլի հետ կապի մեջ մտնել: Քիսինջերը պետք է իմանար, որ Հուվերն ու Հալդեմանը կասկածելու էին Սոնենֆելդին, որը նախորդ գաղտնի լսումներից արդեն ծանոթ էր որպես կապեր ունեցող Իսրայելի եւ Պեռլի հետ» (էջ 322):



*Էլիոտ Աբրամս*

Ռայսը գիտեր նրա մասին: Գիտեր նաեւ, որ նա միակը չէ:

Հաջորդը Սթիվ Ռոզենն էր, որին Լոուրենս Ֆրանկլինի հետ (Վոլֆովիցի, Պեռլի եւ Ուայզմենի օգնականը) ձերբակալել էին լրտեսության մեղադրանքով:

Ռոզենին Ռայսն էր բերել Սպիտակ տուն: Ֆրանկլինին՝ Վոլֆովիցը, իսկ Վոլֆովիցին՝ դարձյալ Ռայսը: Քիթ Ուայզմենը կառավարական պաշտոնյա չէր, բայց Ռայսի կողմից թույլտվություն ուներ հասու լինելու ԱԱԽ-ի թղթածրարներին: Հակառակ զեկույցներում որպես սոսկ AIPAC-ի (իսրայելական քարոզչական խմբավորում) ներկայացուցիչ, հորջորջումին, Ռոզենը ԱԱԽ-ում զբաղեցնում էր Ռանդ կորպորացիայի եւ Մերձավոր Արեւելքի բաժնի ղեկավարի պաշտոնը:

Երեքն էլ ձերբակալվեցին լրտեսության մեղադրանքներով: Ֆրանկլինին դատապարտեցին 13 տարվա բանտարկության, իսկ Ռոզենի եւ Ուայզմենի դատավճիռների կատարումը «հետաձգվեց» Բուշի վարչակարգի արդարադատության բաժնի կարգադրությամբ՝ հաշվի առնելով «ազգային անվտանգության շահերը»: Բուշի կարգադրությամբ Ֆրանկլինի պատիժը մեղմացվեց եւ «10 ամսվա տնային կալանքի» ձեւավորումը ստացավ:

Միեւնույն «հանցագործ» խմբից Դագլըս Ֆիթը, որը միշտ կասկածի տակ էր եղել, նշանակվեց պաշտպանության փոխնախարար: Իսկ Էլիոտ Աբրամսը 1991-ին մեղավոր է ճանաչվել Կոնգրեսում «Իրան-կոնտրա» հետաքննության լսումների ժամանակ երկու անգամ ստելու համար: Ռեյգանը նրան նշանակել էր մարդասիրական օժանդակությունների գծով պետքարտուղարի օգնական, չնայած ԿՀՎ-ն հավաստացած էր, որ նա խորապես ներգրավված է Կենտրոնական Ամերիկայում, հատկապես Գվատեմալայում իրագործված ցեղասպանության մեջ, որին զոհ գնաց 300 հազար մարդ: Նրա մեծագույն ծրագիրը «Էլ Սալվադորն» էր՝ «Էլ Մոզոտը» 1981-ին, երբ հազարավոր անզեն սալվադորցի գյուղացիներ ու հողագործներ, ներառյալ 139 երեխաներ, սպանվեցին Մ. Նահանգներում ռազմական պատրաստվածություն անցած «կոնտրա» խմբավորումների կողմից:

«Հետեւողականորեն ստախոս» հորջորջված Աբրամսը Վաշինգտոնի քաղաքականությունը «անհավասալի ձեռքբերում» որակեց, իսկ Կոնգրեսում «կոմունիստական պրոպագանդա» անվանեց «Նյու Յորք թայմսում» եւ «Վաշինգտոն փոստում» տպագրված հաղորդագրություններն ու լրատվությունները: Նա նաեւ ժխտեց, թե տեղյակ էր եղել արքեպիսկոպոս Օսկար Ռոմերոյի սպանության հանգամանքներին:

1993-ին միայն «Սալվադորյան ճշմարտության» հանձնախմբի (նախագահ Ռոբերտ Տորիչելլի, դեմոկրատ Նյու Ջերսիից) ջանքերով բացահայտվեց իրողությունը:

## Մեթյու Բրայզա

Գալով Ռայսին ամբողջապես վարկաբեկած Մեթյու Բրայզային, նշեմ, որ նա այսօր Ստամբուլում ապրող եւ կասպիական ավազանի նավթային գործառույթներում «խրված» Ադրբեջանում Ամերիկայի նախկին դեսպանն է, որն ամուսնացած է թուրքական հպատակություն ունեցող Զեյնո Բարանի հետ: Վերջինս ոչ միայն «Սաբահ» թուրքական թերթի սեփականատիրոջ խորթ աղջիկն է, այլեւ անպաշտոն կերպով Բաքու-Ջեյհան խողովակաշարի օգտին պայքարող եւ դրա համար ամերիկյան «պաշտպանություն» ձեռք բերելու քարոզչությամբ զբաղվող անձնավորություն:

Բրայզան ծնվել է 1964-ին: Որպես Մ. Նահանգների դիվանագետ նա նախ ծառայել է Լեհաստանում՝ խորհրդային իշխանության ազդեցության վերջին տարիներին, այնուհետեւ Ռուսաստանում՝ 90-ականների կեսերին: Նրա դեսպան լինելու լիազորությունները դադարեցվեցին այն բանից հետո, երբ Հայոց ցեղասպանության վերաբերյալ ժխտողական հայտարարություններ կատարեց: Նրան ԱԱԽ-ի անդամ դարձրեց Կոնդոլիզա Ռայսը 2001-ի ապրիլին՝ վստահելով նրան կարեւորագույն՝



*Զեյնո Բարան եւ Մեթյու Բրայզա*

Թուրքիայի (Եվրասիայի) գրասենյակի ղեկավարի պաշտոնը: Դա նրան մուտքի՝ հասու լինելու թույլտվություն տվեց ամեն տեսակի գաղտնի, երկրի անվտանգությանը վերաբերող փաստաթղթերի, որոնց բովանդակությունը, հետագայում պարզվեց, նա տարիներ շարունակ փոխանցել է թուրք հետախուզության մի աշխատակցուհու, որի հետ ամրելիս է եղել:







*Սթիվ Ռոզեն եւ Քիթ Ուայցման*

Հնարավոր չեղավ պարզել, թե որքան տեղեկություն էր նա փոխանցել, որովհետեւ նա Ռայսի «պաշտպանության տակ» էր, եւ վերջինս նախագահ Բուշի միջոցով իշխանություն էր ձեռք բերել՝ խոչընդոտելու ամեն տեսակի հետաքննություն իր պաշտոնյաների նկատմամբ:

## Գործի բացահայտումը

2002-ի սկզբներին ՀԴԲ-ի երկու գործակալներ ինձ խնդրեցին օգնել իրենց՝ բացահայտելու ազգային անվտանգությանը սպառնացող խախտումները: Ես նրանց ասացի, որ Բրայզան ապրում է Զեյնո Բարանի հետ, իսկ այս մասին նա ոչինչ չի ասել գաղտնի փաստաթղթերին հասու լինելու իրավունք ստանալու վերաբերյալ անցկացվող քննությունների ժամանակ: Հավելեցի նաեւ, որ վերջին անգամ ես նրանց երկուսին տեսել էի Ռոզենի տանը:

Երբ ՀԴԲ-ն ի վիճակի եղավ ապացուցել լրտեսության փաստը, գործակալները պահանջեցին հարցաքննել Բրայզային: Հարցաքննությունները շարունակվեցին 2002/03 թվականներին: Դրանց վերաբերյալ ոչ մի հաղորդակցություն ցարդ չի հրապարակվել: Պարզելուց հետո, որ Բրայզան ստերի եւ խաբեության միջոցով էր հասել իր «անխոցելի» դիրքին, ՀԴԲ-ն գործի անցավ եւ դիմեց Կոնդիին, որն էլ հարկադրված արդեն թույլ տվեց հարցազրույց անցկացնել Բրայզայի հետ: ՀԴԲ-ի գործակալներից մեկն ինձնից խորհուրդ հարցրեց, թե ի՞նչ հարցերի միջոցով է հնարավոր պարզել՝ ճի՞շտ է ասում նա, թե՞ ոչ: Ես որոշ թելադրանքներ տվեցի:

Հարցազրույցի վերջում ՀԴԲ-ն արդեն պաշտոնապես հարց բարձրացրեց չեղյալ համարելու Բրայզային տված բոլոր արտոնությունները: Պետությունը պատրաստ էր կատարելու խնդրանքը: Կոնդին անձամբ խոչընդոտեց գործընթացին եւ փոխանակ հրահանգելու դասական հետապնդում անցկացնելու, Բրայզային նշանակեց պետքարտուղարի օգնականի տեղակալ՝ այն նույն տարածաշրջանի համար, որի օգտին լրտեսելու համար նրան մեղադրել էին:

## «Վիկիպեդիայի» հետաքրքրաշարժ տվյալները

Ահա թե ինչ տվյալներ է հրապարակում «Վիկիպեդիան» վերոնշյալ իրադարձություններից հետո:

2005-ի հունիսին Բրայզան ստանձնեց իր նոր պարտականությունները: Նա պետք է Հարավային Եվրոպայի եւ Կովկասի երկրների հարաբերությունները վերահսկեր եւ ղեկավարեր: Նա նաեւ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հակամարտությունների խաղաղ կարգավորմանն ուղղված Մ. Նահանգների ջանքերը պետք է ուղղորդեր, Սեւ եւ Կասպից ծովերը շրջապատող տարածքների էներգամատակարարման ամերիկյան քաղաքականությունը համակարգեր եւ հանդուրժողականության, իսլամի եւ համայնքների ինտեգրման հարցերով համագործակցեր եվրոպական երկրների հետ:

2009-ի օգոստոսին Ամերիկայի Հայ ազգային կոմիտեի (ANCA) նախագահ Քեն Հաչիկյանը պետքարտուղար Հիլարի Քլինթոնին ուղղված իր նամակում հայ համայնքի մտահոգությունն էր հայտնում Բրայզայի կողմնակալ արտահայտությունների վերաբերյալ՝ կապված Ղարաբաղի հարցի հետ:

2010-ի մայիսին Սպիտակ տունը Բրայզային նշանակեց Մ. Նահանգների դեսպան Ադրբեջանում: 2010-ի սեպտեմբերի 21-ին Սենատի արտաքին հարաբերությունների հանձնախումբը հավանություն տվեց: Դեմոկրատ սենատորներ Ռոբերտ Մենենդեսն ու Բարբարա Բոքսերը փորձեցին խոչընդոտել առաջադրմանը, բայց՝ իզուր: 2010-ի դեկտեմբե-

# Միջազգային

րին նախագահ Օբաման հաստատեց նրա նշանակումը, եւ Բրայզան 2011-ի փետրվարից անցավ պարտականությունների կատարմանը: Սակայն 2012-ի հունվարին ստիպված եղավ թողնել իր պաշտոնը եւ հեռանալ արտաքին գերատեսչությունից, քանի որ ամերիկահայ քաղաքական խմբավորումների ճնշման տակ Սենատը չհաստատեց նրա նշանակումը:

«Վաշինգտոն փոստի» թղթակից Ջեյմս Մորիսոնը գրում է, որ Բրայզայի անցյալի կապերը Ադրբեջանի հետ «կարեւոր կասկածներ» են առաջացնում (իր անաչառության վերաբերյալ):

- 2007-ին «Ազադլըք» ընդդիմադիր թերթի խմբագիր Գանիմաս Զահիդն ու թղթակից Աջիլ Խալիլը դաժան կարգով հետապնդման ենթարկվեցին «Ադրբեջանցիները վճարեցին Մեթյու Բրայզայի հարսանիքի համար» հոդվածի հրատարակման առիթով: Հոդվածում նշվում էր, որ տնտեսական զարգացման ազերի նախարար Հեյդար Բաբաեւն է հոգացել Բրայզայի հարսանիքի ծախսերի մեծ մասը:

- Խալիլը դրանից հետո չորս անգամ ենթարկվել է մահափորձերի եւ 2008-ի հուլիսին, այլեւս չդիմանալով սպառնալիքներին, հաստատվել Ֆրանսիայում:

Հստակ է մի բան, որ Բրայզայի հովանավորները կանգ չեն առնում սոսկ «խոչընդոտներ հարուցելով», նրանց համար սպանությունը նույնպես տարբերակ է:

- Չհաստատված աղբյուրների համաձայն` Բրայզան է կանգնած եղել նաեւ Հարավային Օսիայի դեպքերի հետեւում:

- Հարգված լրագրող եւ քաղբանտարկյալ Էյնուլլա Ֆաթուլլաեւի խմբագրած երկու թերթեր` «Ռեալնի Ազերբայջան» եւ «Գյունդելիք Ազերբայջան», մնում են փակված Ղարաբաղի վերաբերյալ հոդվածներ տպագրելու հետեւանքով:

- Ադրբեջանում վերջին զարգացումների թվում պետք է նշել մամուլի հրապարակումների եւ լուսանկարներ կատարելու վրա դրված նոր սահմանափակումները, որոնք բոլորովին չեն համապատասխանում «ժողովրդավարությունը զարգացնելու» քաղաքականությանը:

### «Registan»-ի սխալներից

Բրայզայի եւ վրաց-ռուսական պատերազմի մասին գրել է նաեւ Ջոշուա Ֆոուսը «Registan»-ում:

- Բուշի վարչակազմում գործողներից շատերի նման Բրայզան նույնպես մոտիկ էր Սաակաշվիլու հետ, եւ շշուկներ են պտտվում, որ նա է «օգնել առաջ տանելու» այդ փոքրիկ երկրի արկածախնդրական պատերազմը Ռուսաստանի դեմ` խոստանալով ամերիկյան օժանդակություն: Ռուսաստանն այդ առնչությամբ շատ հստակ հասկացրել է, որ Բրայզային սառը ընդունելություն կցուցաբերեն ռուս դիվանագետները:

Բրայզան Սմիտակ տուն թափանցեց PNAC-ի խմբի հետ, որն արդեն ուներ մշակված ծրագիր: Նրանք համար պահի էին սպասում Իրաք ներխուժելու` որպես առաջին քայլ Իրան ներխուժելուց առաջ:

2012-ի մարտի 1-ից Բրայզան որպես տնօրեն ղեկավարում է «Պաշտպանության ուսումնասիրությունների միջազգային կենտրոնը», որը USAID-ի ֆինանսավորմամբ գործող էստոնական միջառարկայական միավորում է, այսպես կոչված «think-tank»:

* * *

Կոնդոլիզա Ռայսի եւ Բրայզայի հետ նրա հարաբերությունների բացահայտումներից հետո հնարավոր չեղավ ստանալ մեկնաբանություններ նրանցից: Նա այժմ վարկաբեկված է իր լիազորությունները չարաշահելու հետեւանքով:

Պատրաստեց Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

## Բռնակալները` Ելիսեյան պալատում

Այս տարվա հունվարին Ֆրանսիայի գործող նախագահ Ֆրանսուա Օլանդը, երբ դեռ նախագահի թեկնածու էր, Լը Բուրժեում ճառով հանդես եկավ, որտեղ մասնավորաբար ասաց. «Հանրապետության նախագահ լինել նշանակում է բռնապետներին Փարիզ չհրավիրել»: Օլանդի այս հայտարարությունը, բնականաբար, ուղղված էր իր քաղաքական հակառակորդին` Նիկոլա Սարկոզիին, որը պաշտոնավարման տարիներին Փարիզ էր հրավիրել Մուամմար Քադդաֆիին, Բաշար Ասադին, Գաբոնի նախագահ Ալի Բոնգոյին, Սաուդյան Արաբիայի թագաժառանգին եւ այլոց:

Սակայն, դառնալով նախագահ, Օլանդն ինքը Ելիսեյան պալատում դիմավորեց որոշ բռնապետների, օրինակ` հյուրընկալել է Բահրեյնի թագավորին եւ ահա Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին` օրեր առաջ, ում ֆրանսիական «Լը Ֆիգարո»-ի մեկնաբան Թոմաս Վամպույն անվանել է «Ֆրանսիա այցելած վերջին բռնակալը»:

Ուշագրավ է, սակայն, որ Ելիսեյան պալատը Օլանդի որոշ բռնակալներին արժանացնում է առանձնահատուկ ընդունելության: Բահրեյնի թագավորի վերոհիշյալ այցը անգամ Օլանդի օրակարգում ներառված չի եղել, իսկ Ալիեւը Ելիսեյան պալատում մնացել է ընդամենը կես ժամ, ավելին` Օլանդը հոգացել է, որ ո՛չ Բահրեյնի միապետի, ո՛չ Ադրբեջանի նախագահի այցելությունների ժամանակ ոչ մի լրագրող կամ լուսանկարիչ Ելիսեյան պալատ չմտնի: Ընդ որում, եթե Բահրեյնի թագավորի այցից առհասարակ ոչինչ հայտնի չէ, ապա Ալիեւի հետ Օլանդի հանդիպումից հայտնի է միայն այն, ինչը զետեղված է Ֆրանսիայի նախագահի պաշտոնական կայքէջում. «Նախագահ Օլանդն Իլհամ Ալիեւին կոչ է արել` վերականգնել վստահությունը` Հայաստանի հետ շարունակելու ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցությունները` կապված ԼՂ հակամարտության կարգավորման հետ»: Այսինքն, թե կոնկրետ ի՞նչ բառերով եւ ի՞նչ ձայնի տոնով է Օլանդը այս կոչն Ալիեւին արել, հայտնի չէ: Ուրեմն, եթե Ալիեւն արժանանում է նույն ընդունելությանը, ինչ Բահրեյնի միապետը, հետեւաբար Ալիեւը ֆրանսիական քաղաքական ու հասարակական շրջանակներում ընկալվում է ճիշտ այնպես, ինչպես Բահրեյնի թագավորը` բռնակալ: Այս կապակցությամբ բավական ուշագրավ է Դիդիե Բիլիոնի խոսքը, որը Միջազգային եւ ռազմաքաղաքական հարաբերությունների հետազոտման ինստիտուտի տնօրենն է: Բիլիոնը «Ֆիգարո»-ին ասել է. «Ըստ իս, այն, որ հանրապետության նախագահը հանդիպում է բռնապետների հետ, խնդիր չէ երկու պայմանների պարագայում: Առաջինը` պետք է հետեւել, որ չվարկաբեկվի նախագահի խոսքը: Բացի սրանից, վարվեցողությունն էլ նշանակություն ունի: Կարելի է կազմակերպել այդ հանդիպումները ավելի զուսպ, առանց դեկորների, որն առկա էր, օրինակ` Քադդաֆիի` Փարիզ կատարած այցի ժամանակ: Այս տեսանկյուններից` Լը Բորժեում Ֆրանսուա Օլանդի արած խոստումները կարծես թե իրականանում են. բռնակալներն այլեւս ճոխությամբ չեն ընդունվում Փարիզում»:

Անշուշտ, Ալիեւը, շրջապատված լինելով քաղաքական խորհրդականներով ու ոլորտի մասնագետներով, պետք է որ գիտակցած լինի այս ամենը, այլ հարց է, թե Ալիեւն ի՞նչ է կորցնում բռնակալ լինելով, ոչինչ, համենայն դեպս ադրբեջանցի ժողովուրդը` ոմանք վախից, ոմանք սովորույթից, ամենեւին էլ դեմ չեն, որ բռնակալն իրենց իշխի: Հետեւաբար այստեղ հարցն այն է, թե որքանո՞վ է ճիշտ բռնակալների ընդունելություն կազմակերպելն առհասարակ: Օրինակ` «արաբական գարուն» կոչվածը հենց այս բռնակալներին տապալելու համար էր, սակայն Արեւմուտքի այս ջանքերը ընթացք տվեցին տխալ բռնապետություններում ժողովրդական ընդվզմանը, ինչը Ադրբեջանում չկա: Այսինքն, Արեւմուտքը կոնկրետ Ալիեւին ընդունելու է, ոմանք` Օլանդի պես զուսպ, «առանց դեկորների», դեռ այնքան ժամանակ, քանի դեռ ադրբեջանցի ժողովուրդն է ցանկանում ապրել բռնապետության մեջ, իսկ ավելի ճիշտ` քանի դեռ Ալիեւը բացահայտորեն չի հակադրվել Արեւմուտքին, իսկ այսպես վարվողը, ինչպես գիտենք, արագորեն ոչ միայն ճանաչվում է որպես բռնակալ, ինչն Ալիեւի պարագայում արդեն կա, այլեւ պատժվում է` ինչպես բռնակալ:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

## Աթենքում փորձել են ներխուժել ԱՄՆ դեսպանատուն



Աշխարհում «Մուսուլմանների անմեղությունը» ամերիկյան ֆիլմի դեմ շարունակվող բողոքի ցույցերի ալիքը հասել է Հունաստան: Մայրաքաղաք Աթենքի կենտրոնում` Օմոնիա հրապարակում հավաքված մոտ 700 ցուցարարները, շարժվել են դեպի ԱՄՆ դեսպանատուն, որտեղ ոմանք փորձել են ոստիկանների կենդանի շղթան ճեղքելով ներխուժել դեսպանատան տարածք:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ սկսված բախումների ընթացքում ցուցարարները ոստիկանների վրա նետել են շշեր եւ այլ առարկաներ: Ոստիկանները օգտագործել են արտասվաբեր գազ եւ ցրել են ցույցը: 40 մարդ ձերբակալվել է: Անկարգությունների ժամանակ ջարդուփշուր են արվել ավտոմեքենաների եւ խանութների ցուցափեղկեր:

Հունաստանի բնակչության մեծ մասը կազմում են ուղղափառ քրիստոնյաներ: Սակայն վերջին մեկուկես տասնամյակում այստեղ հաստատվել են Մերձավոր Արեւելքի, Աֆրիկայի եւ Հարավարեւելյան Ասիայի երկրներից եկած հարյուրհազարավոր մահմեդականներ:

Երեկ հակաամերիկյան բողոքի ցույցեր են անցկացվել նաեւ Բանգլադեշում, Իրանում, Պակիստանում, մահմեդական այլ երկրներում:

## Իրանում ստեղծվում է ներքին համացանց

**Իրանի իշխանությունները կառավարական բոլոր գերատեսչությունների համակարգիչները միավորել են նոր, ապահով համակարգչային ցանցում, որը կոչված է դառնալու համացանցի նմանակը: Այդ մասին Մեհր գործակալությանը հայտնել է հաղորդակցությունների եւ տեխնոլոգիաների փոխնախարար Ալի Հաքիմ Ջավադին:**

**Նրա խոսքերով, վերջերս կառավարական բոլոր հիմնարկները միավորվել են «ազգային տեղեկատվական ցանցի մեջ»: Դա առաջին փուլն է: Երկրորդ փուլում ցանցին պետք է միացվեն իրանական նաեւ մյուս համակարգիչները, եւ երկրի բոլոր բնակիչները պետք է կարողանան օգտվել այդ ցանցից:**

**Արտաքին աշխարհից մեկուսացված ազգային տեղեկատվական ցանցը պետք է լրիվ չափով գործի 2013-ի մարտից: Այդ մասին ավելի վաղ հայտարարել էր հաղորդակցությունների եւ տեխնոլոգիաների նախարար Ռզա Թագիպուրը:**

**Առայժմ հայտնի չէ` Իրանի իշխանությունները ներքին ցանցի ստեղծումից հետո իրանցիներին չե՞ն զրկի արդյոք արտաքին համացանցին միանալու հնարավորությունից: Ներկայումս Իրանն արդեն շրջափակում է բազմաթիվ կայքէջերի մուտքը:**

## Ձերբակալվել է Ռաֆսանջանիի որդին

**Իրանի իշխանությունները ձերբակալել են երկրի նախկին նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի որդուն` Մեհդի Հաշեմիին: Այդ մասին հաղորդում է IRNA գործակալությունը: Ռոյթեր գործակալության տվյալներով, նա կիրակի օրը վերադարձել էր Լոնդոնից, որտեղ թաքնվում էր երեք տարի:**

**Մեհդի Հաշեմին ամբաստանվում է 2009-ի նախագահական ընտրություններից հետո կազմակերպված հակակառավարական ցույցերին մասնակցելու մեջ: Այն ժամանակ հաղթել էր Մահմուդ Ահմադինեժադը: CNN-ը հաղորդում է, որ անցած շաբաթավերջին սկսել է իր պատիժը կրել Հաշեմիի քույրը` Ֆաեզեհ Հաշեմին, որը դատված է նույն մեղադրանքով:**

## ԿԺԴՀ-ն ծրագրում է գյուղատնտեսական բարեփոխում



Հյուսիսային Կորեայի իշխանությունները ծրագրում են գյուղացիներին թույլատրել իրենց պահելու բերքի մինչեւ 50 տոկոսը: Այդ մասին Ռոյթեր գործակալությանը պատմել է Փենյանի եւ Պեկինի հետ սերտորեն կապված մի աղբյուր:

Ներկայումս գրեթե ամբողջ գյուղատնտեսական պարտադրանքը ածուրդներում գնվում է պետական գներով, նշում է գործակալությունը: Եթե գյուղացիներին թույլատրեն ինքնուրույնաբար վաճառել աճեցված բերքը, դա կխթանի գյուղմթերքների արտադրությունը, ինչը վերջին հաշվով թույլ կտա զսպել թանկացումը եւ պայքարել սովի դեմ:

Սեպտեմբերի 25-ին տեղի կունենա ԿԺԴՀ խորհրդարանի նիստ, որտեղ կքննարկվեն «տնտեսական ուղղումները», թեեւ այդ մասին հրապարակավ կարող է եւ չհայտարարվել, նշել է աղբյուրը:

Փորձագետները ջանում են կռահել, թե երկրի առաջնորդ Կիմ Չոն Ինը մինչեւ ուր կարող է գնալ բարեփոխումների ուղիով: Ոմանց կարծիքով, նա մտադիր է հրաժարվել ղեկավարման կոշտ սկզբունքներից, որոնց կողմնակիցն էր իր հայրը ամբողջ 17 տարի:

ԿԺԴՀ-ն վերջին 20 տարիներին անկում ապրող իր տնտեսությունը վերաշխուժացնելու նպատակով թերեւս գնա Չինաստանի ուղիով:

Հյուսիսկորեացիներին տարեկան պետք են մինչեւ 5 մլն տոննա հացահատիկ եւ կարտոֆիլ, այնինչ 1990-ականների սկզբից դրանց բերքը կազմում է 4,7 մլն տոննայից ոչ ավելի: ՄԱԿ-ի գնահատումների համաձայն, ԿԺԴՀ բնակչության մոտավորապես 1/3-ը թերսնվում է:

ՎԻՎԱՍԵԼ ՄՏՍ-Ը՝ ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

## Վերադարձի դասական երաժշտության վեցերորդ փառատոն

«Արվեստների պատկերասրահ» մշակութային հիմնադրամը՝ ՀՀ նախագահի տիկին Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո եւ ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության գլխավոր հովանավորությամբ ներկայացնում է Վերադարձի դասական երաժշտության վեցերորդ փառատոնը:

Փառատոնի անվանումն ամբողջությամբ արտահայտում է դրա նպատակը՝ մի տանիքի տակ համախմբել Հայաստանի եւ արտերկրի դասական երաժշտության հայ կատարողներին: ՎիվաՍել-ՄՏՍ-ն վճռական է վերջին երկու տասնամյակում արտասահմանում ստեղծագործող մեր հայրենակիցների՝ Հայաստան այցելությանն աջակցելու եւ իրենց կատարումներով՝ դասական երաժշտության հմայքը հայ հասարակությանը ներկայանալու նվիրական գործին սատարելու հարցում: Արդեն վեցերորդ տարին այս փառատոնը մեր երկրի զավակներին հայրենիք է բերում աշխարհի տարբեր անկյուններից: Փառատոնի մասնակիցների թվում են հանրահայտ հայ երաժիշտներ Ֆրանսիայից, Իտալիայից, Դանիայից եւ Գերմանիայից:

«Դասական երաժշտությունը կարեւոր է մարդու ներդաշնակ զարգացումն ապահովելու համար: Որպես Հայաստանում հեռահաղորդակցության առաջատար օպերատոր եւ կորպորատիվ պատասխանատու քաղաքացի, ՎիվաՍել-ՄՏՍ-ը մեծ կարեւորություն է տալիս հայաստանյան հասարակության գեղագիտական դաստիարակությանը եւ բազմակողմանի զարգացմանը»,- ասաց ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**: «Մենք պետք է նպաստենք մեր հասարակությունում դասական երաժշտության մասսայականացմանը, հատկապես՝ երիտասարդների շրջանում: Չէ՞ որ դասական երաժշտությունն է ի զորու ընդլայնելու մարդու՝ շրջապատող աշխարհի ամբողջ գեղեցկությունն ըմբռնելու եւ գնահատելու ունակությունը: Երաժշտությունը կարող է հարստացնել մարդու կյանքը եւ օգնել տեսնել աշխարհը նորովի»,- Ռալֆ Յիրիկյանը:

Մշակույթի ոլորտում սերտ համագործակցությունը գործունեության հիմք ընդունելով՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցում է արվեստի տարբեր բնագավառներում՝ երաժշտության, պարի, թատրոնի եւ ազգային հպարտության աղբյուր եւ հայի ազգային ինքնության հիմք ծառայող այլ ասպարեզներում իրականացվող ծրագրերին:

Վերադարձի դասականերաժշտության վեցերորդ փառատոնի հանդիսավոր բացման համերգը կայացավ սեպտեմբերի 24-ին Ա. Խաչատրյան համերգասրահում: Փառատոնը հայ հանդիսատեսին է ներկայանալու 8 համերգից բաղկացած համերգաշարով եւ իր աշխատանքը կավարտի հոկտեմբերի 31-ին:

## Եվգենի Կիսսին Հայաստանում

Մեկնարկում է «Երեւանյան հեռանկարներ» 13-րդ երաժշտական միջազգային փառատոնը, որի առթիվ Երեւանում է գտնվում աշխարհահռչակ դաշնակահար Եվգենի Կիսսին: Հատկանշական է, որ փառատոնի շրջանակում Հայաստան են հրավիրվել մի շարք հեղինակավոր մենակատարներ, նվագախմբեր, որոնցից են՝ Պլասիդո Դոմինգոն, Բորիս Բերեզովսկին, Յուրի Բաշմետը, Ջուլիանա Ռախլինը, Լոնդոնի թագավորական նվագախումբը, Գուլբենկյան նվագախումբը եւ այլք:

Նշենք, որ Եվգենի Կիսսին ծնվել է 1971թ. Ռուսաստանում՝ հրեա ընտանիքում: Նվագել է Հերբերտ Ֆոն Կարայանի ղեկավարությամբ Բեռլինի ֆիլհարմոնիկ նվագախմբում, ինչպես նաեւ Վալերի Գերգիեւի դիրիժորությամբ՝ Լոնդոնի սիմֆոնիկ նվագախմբի հետ: Ե. Կիսսինը եղել է նաեւ Գրեմմի մրցանակաբաշխության հատուկ հյուր, ինչպես նաեւ ստացել է երկու Գրեմմի մրցանակ:

Եվգենի Կիսսինի համերգը կկայանա սեպտեմբերի 27-ին Արամ Խաչատրյան համերգասրահում, եւ ծրագրում կհնչի Հայդնի, Բեթհովենի, Շուբերտի եւ Լիստի ստեղծագործությունները:

Փառատոնն անցկացվում է ՀՀ մշակույթի նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ:

Ս. Հ.

ԹՈՒՐՔԻԱ

## Զավեն Բիբերյանի վեպը վերահրատարակվել է

Հանրապետական շրջանի պոլսահայ գրականության եզակի գրողներից՝ Զավեն Բիբերյանի «Յալնըզլար» վեպը, որը նրա հայերենով ստեղծած «Լկրտածը» վեպի թուրքերեն թարգմանությունն է, վերահրատարակվել է Պոլսում «Արաս» հրատարակչատան կողմից: Կանադահայ համայնքում լույս տեսնող «Ապագայ» ազգային, մշակութային եւ հասարակական շաբաթաթերթի փոխանցմամբ, 240 էջից բաղկացած հատորը, Թուրքիայի ոչ հեռավոր անցյալի վերաբերյալ, ուրույն դիտարկումներով հյուսված, մի գործ է, որի դեպքերը տեղի են ունենում 1950-ական թվականներին Էրեն գյուղի մեջ: Հեղինակը անդրադառնում է թուրք, հայ, հրեա եւ հույն համայնքների անհաղորդության երեւույթներին եւ ներկայացնում առանձնության դատապարտվածների զայրույթը:

Հեղինակը երկար տարիներ աշխատակցել է «Ժամանակ» օրաթերթին՝ մաս կազմելով խմբագրական կազմին: Նրա գլուխգործոցն է համարվում «Մրջյունների վերջալույսը» գործը, որ նախ որպես թերթոն է հրատարակվել «Ժամանակ» թերթում եւ ապա որպես գիրք՝ իր մահվանից (1984) մի քանի շաբաթ առաջ: Այս գիրքը նույնպես թուրքերեն թարգմանված է եւ 1998-ին հրատարակված «Արասի» կողմից:

Հ. Ծ.

## Նատալի Արոյանը հմայեց ներկաներին



**Բեմական զուսպ կեցվածք, ձայնային հարուստ տվյալներ եւ կատարողական բարձր արվեստ: Այսպիսի հակիրճ բառերով կարելի է ներկայացնել անցյալ շաբաթ օրը՝ սեպտեմբերի 22-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում կայացած ավստրալահայ երիտասարդ երգչուհի Նատալի Արոյանի (սոպրանո) դասական երաժշտության համերգը, որը բացառիկ պահեր պարգեւեց ունկնդիրներին: Երեկոյին մասնակցում էր ջութակահար Կարեն Շահգալդյանը, որը Ռախմանինովի եւ Դե Ֆալլայի ստեղծագործությունների զգացմունքային նուրբ կատարումով հուզեց բոլորին: Դաշնամուրի վրա նրան եւ Նատալիին ընկերակցում էր Արմինե Գրիգորյանը:**

**Ըստ համերգի տպագիր ծրագրի տեղեկությունների, Նատալին ծնվել է Սիդնեյում եւ դաստիարակվել հայկական հոգեւոր-մշակութային ոգով: Ստացել է կրկնակի բարձրագույն կրթություն Սիդնեյի կաթոլիկական համալսարանում՝ բիզնեսի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագիտությունների գծով: Հետաքրքրությունը օպերային արվեստի նկատմամբ առաջացել է, երբ հանդիպել է ճանաչված մեցցո-սոպրանո Լիլի Ավչյանին: 2004-ին Նատալին ընդունվել է Սիդնեյի կոնսերվատորիա: 2008-ին արժանացել է միանգամից ե՛ւ Նյու Յորքի օպերայի հիմնադրամի կրթաթոշակին, ե՛ւ «Հերալդ Սան Արիա» մրցույթի առաջին մրցանակին:**

**2009-ին Նատալին շարունակել է իր մասնագիտական ուսումը Նյու Յորքի Ման քոլեջի Ռութ Ֆալկոնի դասարանում, որին հանդիպել էր մեկ տարի առաջ Թել Ավիվում (Իսրայել) միջազգային վոկալ արվեստների ինստիտուտի ամառային ծրագրին մասնակցելու ժամանակ: Նյու Յորքում դեռ սովորելու տարիներին Նատալին ելույթներ է ունեցել Վերդիի «Բալ մասկարադ», Մոցարտի «Այդպես են անում բոլորը», Մենոտիի «Բլիքեր փողոցի սուրբը» եւ Վերդիի «Ֆալստաֆ» օպերաներում:**

**Նատալին համերգներով հանդես է եկել նաեւ Նյու Յորքի հեղինակավոր Քարնեգի Հոլ եւ Վեյլ համերգասրահներում եւ ճանաչվել երկու միջազգային մրցույթների հաղթող: Մասնակցել է Տոսկանայում (Իտալիա) «Սոլտի տե կանավա ակադեմիայի» ծրագրին, որտեղ համագործակցել է ճանաչված դիրիժոր Ռիչարդ Բոնինգեի եւ Դեյմ Կիրի տե Կանավայի հետ, ինչպես նաեւ Գրացում (Ավստրիա) «Երաժշտության ամերիկյան ինստիտուտի» (AIMS) ծրագրին, որտեղ 49-րդ միջազգային մրցույթի եզրափակիչ փուլում առաջին տեղն է գրավել եւ արժանացել «Հանդիսատեսի համակրանքի» հատուկ մրցանակին:**

**Ավստրալիա վերադարձին, 2011-ին, դարձյալ առաջին տեղը գրավելով «Իտալական օպերայի հիմնադրամի» մրցույթում, հնարավորություն է ստացել մեկ տարի ուսանելու լեգենդար սոպրանո Միրելա Ֆրենիի մոտ Իտալիայի Մոդենա քաղաքում:**

**Վերջերս Նատալին «Մետրոպոլիտեն օպերայի երիտասարդ արտիստներ» ծրագրի շրջանակներում հրավիրվել է Նյու Յորք՝ Մետրոպոլիտենում կատարելու Արմիդայի դերը Գլյուկի համանուն օպերայում: Հաջորդ տարի նա հանդես է գալու Սիդնեյի օպերային թատրոնում որպես մեներգչուհի: Հաջողություն մաղթենք իրեն:**

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

*Մի էջ իրանահայ անվանի դերասանուհի՝ Մահայա Պետրոսյանի հուշատետրից*

## «Որքան վատ է, որ մարդկանց իրենց հագուստով են դատո՛ւմ»

«Արտիստը» ֆիլմի նկարահանումներից առաջ որոշվեց, որ ես նախ, հենց այնպես, որպես մուրացկան փողոց դուրս գամ, մի քիչ փորձառություն վաստակեմ, վստահանամ, ապա անցնենք իսկական գործին: Այդ նպատակով էլ մի օր առավոտյան, ինձ վարպետորեն գրիմ արեցին, այնպես, որ կատարյալ անճանաչելի դարձա եւ այնպես, որ չէր էլ երեւում, թե գրիմ արած եմ, եւ կարկատած ու պատառոտված ցնցոտիներով փողոց դուրս եկա:



Ըստ ծրագրի, ես պետք էր քաղաքի մի քանի խճողված ու նաեւ թեթեւ անցուդարձ ունեցող փողոցների խաչմերուկների վրա ծամոն ծախեի եւ օգնություն մուրայի:

Գործն սկսեցի քաղաքի հարուստ թաղամասերից մեկի մեծ հրապարակից եւ մինչեւ քաղաքի կենտրոնական թաղերից մեկը կհասնեի, ես ինձ արդեն անչափ վատ էի զգում: Ճիշտն ասած, սաստիկ ամոթից ձեռքերս ու ոտքերս խիստ դողում էին: Մի տեսակ խորթ զգացում էր պատել ամբողջ էությունս: Ախր ոչ մի ծանոթ էլ չկար կողքիս, ոչ մեր նկարահանման խումբն էր այդտեղ եւ ոչ էլ դերասաններից որեւէ մեկը:

Սա արդեն կատարյալ իրականություն էր եւ ոչ թե ֆիլմ: Էլ ինչ տարատեսակ հակազդեցությունների որ չհանդիպեցի, ինչ ստորացումների, որ չարժանացա եւ ինչ վիրավորանքներ, որ կյանքիս մեջ չէի կրել, կուլ չտվեցի... Ներառյալ նաեւ սրտամրմուռ մարդկանց կարեկցանքային արտահայտությունները:

Հետաքրքրականն այն էր, որ ինչ էլ փորձում էի ինձ համոզել, որ այդ ստորացումներն ու վիրավորանքները ինձ չէ, որ ուղղված են, այլ այն մուրացկանին, որի դերն եմ հիմա խաղում ես, չէր ստացվում: Ամեն մի կծու խոսքից քրտինքը վազում էր ճակատովս եւ ուզում էի, որ գետինը պատռվեր եւ ես մտնեի մեջը:

Այս փորձառությունը բացի իր սարսափելի դառնությունից, ինձ մի քանի բաներ սովորեցրեց, որոշ մարդկանց վերաբերմունքից, իրենցից ստորադասների նկատմամբ: Շատ մարդիկ ինձ տեսնելիս ինչ-որ հոգեկան բավարարություն էին ստանում եւ հոգիները փառավորվում էր գերադասության զգացումից եւ որքան կարողանում էին նեղացնում էին ինձ: Մի քանիսն էլ ջանում էին խրատներ տեղալ գլխիս, իսկ ոմանք էլ ծամոններիս համար արժեքից ավելի շատ էին «շռայլում» իրենք իրենց բավարարելու միտումով:

Բայց այնուամենայնիվ հետաքրքիրն այն է, որ մարդ արարածը շորերն ու տիպը փոխելով այնպես է կորցնում իր արժեքը, որ եթե ինքն իրեն անմիջապես հետ չքաշի մեքենաների առջեւից, առանց տատանվելու նրան շան պես տակով կտան ու կանցնեն...

**Թարգմանությունը՝**
**Խաչիկ Խաչերի**

# Անդրանիկ Կարապետյանն ուժեղագույնն է նաեւ աշխարհում

## *Հայ ծանրորդը բարելավեց աշխարհի պատանեկան իր ռեկորդները*



Կոչիցեում ավարտված ծանրամարտի աշխարհի պատանեկան առաջնությունում Հայաստանի 6 պատվիրակներից միայն մեկը կանգնեց պատվո պատվանդանին: Գերազանց ելույթ ունեցավ վերջերս Բուխարեստում պատանիների Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճած եւ պատանեկան համաշխարհային 2 ռեկորդ սահմանած Անդրանիկ Կարապետյանը, որը մինչեւ 77 կգ քաշային կարգում ուժեղագույնը ճանաչվեց նաեւ աշխարհում: Երկամարտում Անդրանիկը ցույց տվեց 331 կգ (155+176) արդյունք, ինչը մեկ կգ-ով գերազանցում է Եվրոպայի առաջնությունում նրա ցույց տված ցուցանիշը: Հայ ծանրորդը մեկ կգ-ով բարելավեց պոկում վարժության եւ երկամարտի համաշխարհային պատանեկան ռեկորդները, որ սահմանել էր Բուխարեստում:

Անդրանիկ Կարապետյանը շատ վստահ հանդես եկավ երկու վարժություններում էլ: Պոկումում նա հաջորդաբար բարձրացրեց 140, 146 եւ 155 կգ ու արժանացավ փոքր ոսկե մեդալի: 2-րդ տեղը գրաված ղազախ Գալիմբեկ Ժուբասկանովը հայ ծանրորդին զիջեց 12 կգ-ով: Հրում վարժությունում բարձրացնելով 170 եւ 176 կգ, Կարապետյանն արդեն 2-րդ մոտեցմամբ ապահովեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը, ուստի հրաժարվեց 3-րդ փորձից: Այս վարժությունում էլ նա 7 կգ-ով առաջ անցավ ռուսաստանցի Արտյոմ Լեֆլերից: Իսկ երկամարտում Լեֆլերից տարբերությունն ահռելի էր՝ 27 կգ: Սա վկայում է հայ ծանրորդի մեծ ներուժի մասին: Բրոնզե մեդալը երկամարտի 303 կգ (143+160) արդյունքով նվաճեց ղազախ Գալիմբեկ Ժուբասկանովը:

Քաշային այս կարգում հանդես եկավ նաեւ Հայաստանը ներկայացնող Դավիթ Թաթոյանը: Նա երկամարտի 289 կգ (125+164) արդյունքով գրավեց 6-րդ տեղը:

Մինչեւ 94 կգ քաշային կարգում էլ Հայաստանից 2 ծանրորդ դուրս եկավ մրցահարթակ: Մեդալի նվաճման հույսեր կային Սիմոն Մարտիրոսյանից, որը Բուխարեստում կայացած Եվրոպայի առաջնությունում երկամարտի 321 կգ (148+173) արդյունքով բրոնզե մեդալակիր էր դարձել: Թեեւ Կոչիցեում Սիմոնը 12 կգ ավելի բարձրացրեց, բայց դա բավարար չէր երկամարտում մեդալ նվաճելու համար: Նա երկամարտի 333 կգ (150+183) արդյունքով զբաղեցրեց 4-րդ տեղը: Ճիշտ է, հրում վարժությունում Սիմոնը հաջորդաբար բարձրացնելով 170, 180 եւ 183 կգ, բրոնզե մեդալի արժանացավ: Նա միայն անձնական ավելի ծանր քաշի պատճառով արծաթե մեդալը զիջեց նույնպիսի արդյունքի հասած ռուսաստանցի Նիկիտա Սոլովյովին: Աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճեց մոլդովացի Մարսել Գուիդեան, որը երկամարտում ցույց տվեց 347 կգ (155+192) արդյունք: Իսկ ահա Հայաստանի 2-րդ պատվիրակ Նարեկ Հովհաննիսյանն անհաջող հանդես եկավ: Պոկում վարժությունում միայն 3-րդ մոտեցմամբ բարձրացնելով 130 կգ-ը, Նարեկը գրավեց 8-րդ տեղը: Իսկ ահա հրումում սկզբում չբարձրացրեց 160 կգ-ը, հետո ձախողվեց 165 կգ-ը բարձրացնելիս եւ 0 ստացավ:

# «Միկան» կրկնակի սուպերգավաթակիր

Երեկ «Հանրապետական» մարզադաշտում ֆուտբոլի Հայաստանի 2011-ի վերջին մրցանակը՝ Սուպերգավաթը վիճարկեցին երկրի չեմպիոն «Ուլիսն» ու գավաթակիր «Միկան»: Եթե «Միկան» 5-րդ անգամ էր վիճարկում պատվավոր մրցանակը, եւ մեկ անգամ՝ 2005-ին դարձել էր սուպերգավաթակիր, ապա «Ուլիսի» ֆուտբոլիստներն առաջին անգամ էին մրցավեճի բռնվում Սուպերգավաթի խաղում:



Երկու թիմերն էլ ապարեզ էին դուրս եկել ոչ մարտական կազմերով: «Միկայից» տարբեր պատճառներով բացակայում էին Ալեքսը, Աղվան Մկրտչյանը, Արմեն Պետրոսյանը, Վարդգես Սաթումյանը: «Ուլիսից» խաղին չէին մասնակցում Դավիթ Գրիգորյանը, Արտակ Գրիգորյանը, Հովհաննես Գրիգորյանը, Միխեիլ Սիմոնյանը:

Հանդիպումն անցավ համառ մրցապայքարում, որում երկու թիմերն էլ ձգտում էին հաջողության հասնել: Թե՛ «Միկան» եւ թե՛ «Ուլիսը» գոլային մի քանի իրական պահեր ստեղծեցին, սակայն հիմնական ժամանակում գործն այդպես էլ վճռական հարվածների չհասավ: Մրցակարգի համաձայն նշանակվեց 30 րոպե լրացուցիչ ժամանակ: Այստեղ եւս թիմերից յուրաքանչյուրը կարող էր հաջողության հասնել եւ վճռել մրցակցության ելքը: Սակայն նպաստավոր դիրքերից վրիպեցին ուլիսցի Պատոն եւ «Միկայի» հարձակվող Արեգ Ազատյանը: Խաղավերջում էլ քիչ էր մնացել Սեմյոն Մուրադյանի տուգանային հարվածն ավարտվեր դարպասի գրավմամբ, սակայն հաջող խաղաց «Ուլիսի» դարպասապահ Էդուարդ Հովհաննիսյանը: Քիչ անց, արդեն ուլիսցի Շոթա Ջիքիան կարող էր հաղթանակ պարգեւել իր թիմին, սակայն նրա հարվածը բարձր ստացվեց:

Եվ այսպես, Սուպերգավաթի բախտը որոշվեց հետխաղյա 11 մ հարվածաշարով: Առաջինը դիպուկ հարվածով դարպասը գրավեց միկացի Նարեկ Բեգլարյանը, որին հետեւեց ուլիսցի Արսեն Բալաբեկյանի հարվածը: Այնուհետեւ Սարգիս Շահինյանը առաջ մղեց «Միկային»՝ 2-1: Իսկ ահա ուլիսցի Գեղամ Հարությունյանի հարվածից հետո գնդակը դիպչելով ձողին, դուրս եկավ դաշտից: Փաստորեն հենց այս վրիպումն էլ ճակատագրական եղավ «Ուլիսի» համար, քանի որ հետագայում «Միկայից» դիպուկ հարվածներով աչքի ընկան Ալեքսանդր Թադեւոսյանը, Սեմյոն Մուրադյանն ու դարպասապահ Գեւորգ Կասպարովը, որն էլ վերջակետ դրեց լարված հանդիպմանը: «Ուլիսից» 11 մ հարվածները դիպուկ իրացրին Արամ Բարեղամյանն ու Շոթա Ջիքիան:

Այսպիսով, 11 մ հարվածներով հաղթելով 5-3 հաշվով, «Միկան» իր պատմության մեջ երկրորդ անգամ դարձավ Հակոբ Տոնոյանի անվան սուպերգավաթակիր:

# Պատանիներն անհաջող են հանդես գալիս

**Մինչեւ 16 տարեկանների ֆուտբոլի Հայաստանի պատանեկան հավաքականն անհաջող է հանդես գալիս Աշգաբադում ընթացող Թուրքմենստանի նախագահի գավաթի խաղարկությունում: A խմբում ընդգրկված մեր ընտրանին առաջին խաղում ոչ-ոքի՝ 3-3 հաշվով ավարտեց հանդիպումը Ղրղզստանի հավաքականի հետ: Մեր ֆուտբոլիստներից 2 գոլ խփեց Հովհաննես Փանոյանը, մեկ անգամ էլ աչքի ընկավ Ռաֆայել Դարբինյանը:**

**Հաջորդ տուրում հայ պատանիները մրցեցին ղազախների հետ: Մեր հավաքականը 1-2 հաշվով պարտություն կրեց: ՀՀ հավաքականից միակ գոլը խփեց Գառնիկ Հովակիմյանը: Էլ ավելի անհաջող խաղացին մեր ֆուտբոլիստները Թուրքմենստանի պատանեկան հավաքականի հետ՝ զիջելով 1-4 հաշվով: Մեր թիմից միակ գոլի հեղինակը Ռաֆայել Դարբինյանն էր:**

**3 տուրից հետո Հայաստանի պատանեկան հավաքականը 1 միավորով նախավերջին՝ 4-րդ տեղում է եւ արդեն կորցրել է կիսաեզրափակիչ մտնելու բոլոր հնարավորությունները: Աղյուսակը 6-ական միավորով գլխավորում են Թուրքմենստանի եւ Ռուսաստանի հավաքականները, որոնք 2-ական խաղ են անցկացրել: Վերջին խաղում մեր ֆուտբոլիստները կմրցեն ռուսների հետ:**

ՁՅՈՒԴՈ

# Գարիկ Հարությունյանն արժանացավ բրոնզե մեդալի



**Խորվաթիայի Պորեչ քաղաքում անցկացված ձյուդոյի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում հայ ձյուդոյիստներից առավել հաջող հանդես եկավ 55 կգ քաշային Գարիկ Հարությունյանը, որը գրավեց 3-րդ տեղը: Գարիկը մրցաշարում 4 հաղթանակ տոնեց, կրեց մեկ պարտություն: Նրա մրցակիցների թվում էին Ադրբեջանի ներկայացուցիչներ Ռասիմ Ալմամեդովն ու Մեհման Սադիգովը, որոնց նկատմամբ հայ ձյուդոյիստը հաղթանակներ տոնեց՝ հասնելով բացարձակ առավելության:**

**Մինչեւ 66 կգ քաշային կարգում Գեւորգ Թորոսյանը հաջողությամբ հաղթահարելով առաջին 2 փուլերի արգելքը, 3-րդ գոտեմարտում զիջեց հոլանդացի Ջորդի Բակեսին ու դուրս մնաց պայքարից: Քաշային այս կարգում մեր մյուս ձյուդոյիստ Դավիթ Ղազարյանն առաջին գոտեմարտում հաղթեց թուրք Թոփալ Օգուզ Խանին, իսկ հաջորդում պարտվեց պորտուգալացի Լուիզ Մենդեսին:**

**Մինչեւ 60 կգ քաշային կարգում Արսեն Ղազարյանը պարտվեց ապագա չեմպիոն Ջաուր Կալաշովին: Անհաջող էր նաեւ նույն քաշային կարգում Արսեն Թովմասյանի ելույթը, որը պայքարից դուրս մնաց 2-րդ փուլից՝ պարտվելով իտալացի Մարի Դի Լորենցո Կարմինային: Անհաջողության մատնվեցին նաեւ Արտավազդ Հովսեփյանը (73 կգ), Մհեր Թավաքալյանը (81 կգ) եւ Երջանիկ Կարապետյանը (52 կգ):**

# Արոնյանը կսկսի Կարյակինի հետ մրցախաղով

**Բրազիլական Սան Պաուլու քաղաքում մեկնարկող շախմատի «Մեծ սաղավարտ» մրցաշարի առաջին տուրում Լեւոն Արոնյանը սպիտակներով կխաղա ռուսաստանցի Սերգեյ Կարյակինի հետ: Տուրի մյուս զույգերը կազմել են Վիշվանաթան Անանդն ու Ֆրանսիսկո Վալյեխոն, Ֆաբիանո Կարուանան եւ Մագնուս Կառլսենը:**

**Մրցակարգի համաձայն, հաղթանակի համար տրվում է 3 միավոր, ոչ-ոքին գնահատվում է մեկ միավոր: Սան Պաուլուում շախմատիստները մինչեւ սեպտեմբերի 29-ը կանցկացնեն առաջին շրջանի հանդիպումները: 2-րդ շրջանը կանցկացվի իսպանական Բիլբաո քաղաքում հոկտեմբերի 8-13-ը:**

# Ֆուտբոլասերները դժգոհ են «Հրազդանի» տոմսերի բարձր գներից

**Երեկվանից վաճառքի են հանվել հոկտեմբերի 12-ին «Հրազդան» մարզադաշտում կայանալիք Հայաստան-Իտալիա ընտրական մրցախաղի տոմսերը: Ի տարբերություն «Հանրապետական» մարզադաշտի, որի հանդիպումների տոմսերի գինը տատանվում էր 3-8 հազար դրամի սահմաններում, «Հրազդանում» դրանք ավելի թանկ արժեն: Արեւմտյան տրիբունայում տեղ զբաղեցնելու համար հարկ կլինի 10 հազար դրամ վճարել: Արեւելյան տրիբունայի տոմսերն արժեն 7 հազար դրամ, հարավային եւ հյուսիսային տրիբունաներինը՝ 5 հազար դրամ: Ամենաէժան տոմսերը յարուսինն են՝ 3 հազար դրամ:**

**Տոմսերի բարձր գների առնչությամբ ֆուտբոլասերները սոցցանցերում արդեն իրենց արդարացի վրդովմունքն են արտահայտել: Ֆեյսբուքում նույնիսկ ստեղծվել է «Պահանջում ենք վերանայել Հայաստան-Իտալիա խաղի տոմսերի գները» անվանումով խումբ, որի անդամների թիվն արդեն անցել է 300-ից:**

# «Շիրակը» կրճատեց միավորների տարբերությունը «Միկայից»

**2 հանդիպումներով ավարտվեց ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 23-րդ տուրը: Գյումրիում «Շիրակը» հյուրընկալվելով «Արարատին», կամային հաղթանակ տոնեց: Խաղասկիզբն անհաջող դասավորվեց գյումրեցիների համար: 6-րդ րոպեին փորձելով կանխել եզրից տուգանային հրապարակ ուղարկված փոխանցումը, Ռաֆայել Պալտաջյանը գլխի հարվածով գնդակն ուղարկեց սեփական դարպասը:**

**Բաց թողած գոլը ստիպեց գյումրեցիներին մեծ ուժերով գրոհելու, ինչը ցանկալի արդյունք տվեց: Նախ Ֆոֆանա Բեկոն գլխի հարվածով վերականգնեց հավասարակշռությունը, ապա Անդրանիկ Բարիկյանը հաշվի մեջ առաջ մղեց «Շիրակին»: Սակայն ընդմիջման թիմերը գնացին հավասար՝ 2-2 հաշվի ժամանակ: Գրոհներից մեկի ժամանակ «Շիրակի» պաշտպանը ձեռքով խաղաց եւ Տիգրան Ոսկանյանը հստակ իրացրեց 11 մ հարվածը:**

**Դեռ նոր էր սկսվել 2-րդ խաղակեսը, երբ Արա Մկրտչյանը 3-րդ գնդակն ուղարկեց արարատցիների դարպասը՝ վճռելով հանդիպման ելքը:**

**«Հանրապետական» մարզադաշտում «Փյունիկը» հյուրընկալել էր «Բանանցին»: Մեծ ֆուտբոլին հրաժեշտ տված Սարգիս Հովսեփյանի փոխարեն թիմի ավագի թեւկապն այդ օրը կրում էր Դավիթ Մանոյանը: Հենց նրան էլ բախտ վիճակվեց դառնալ հանդիպման միակ գոլի հեղինակը:**

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Միկա | 23 | 16 | 4 | 3 | 40-22 | 52 |
| 2. Շիրակ | 22 | 14 | 4 | 4 | 38-23 | 46 |
| 3. Իմպուլս | 23 | 11 | 5 | 7 | 39-34 | 38 |
| 4. Փյունիկ | 22 | 10 | 3 | 9 | 39-30 | 33 |
| 5. Գանձասար | 22 | 8 | 6 | 8 | 24-20 | 30 |
| 6. Ուլիս | 23 | 7 | 5 | 11 | 29-32 | 26 |
| 7. Բանանց | 22 | 3 | 7 | 12 | 23-37 | 16 |
| 8. Արարատ | 23 | 3 | 2 | 18 | 17-51 | 11 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Նորայր Գյոզալյան | «Իմպուլս» | 13 |
| Վիուլեն Այվազյան | «Փյունիկ» | 10 |
| Սեմյոն Մուրադյան | «Միկա» | 10 |
| Ֆոֆանա Բեկո | «Շիրակ» | 9 |
| Լամին Լի Յորո | «Շիրակ» | 9 |

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Հայկական հուշարձաններ Դաղստանում

Դաղստանը, որը Ռուսաստանի Դաշնության կազմում է, ունի բավական շատ հայկական հուշարձաններ, որոնք ստեղծվել են դեռեւս Տիգրան Մեծի ժամանակաշրջանում:

Օրերս հայկական ճարտարապետության ուսումնասիրման հիմնադրամի նախագահ **Սամվել Կարապետյանը** շրջայց է կատարել Դաղստանում:

Բանախոսն ասաց, որ շատ հուշարձաններ չեն պահպանվել. «Օրինակ՝ Մախաչկալայում, նախկին Պետրովսկում, 19-րդ դարի Պողոս-Պետրոս եկեղեցին գոյություն ունի, սակայն վերածվել է վաճառանոցի, սակայն վաճառողները տեղյակ չէին, որ առեւտուր են անում եկեղեցում:



*Դերբենդի Սբ Ամենափրկիչ եկեղեցին*

Հայերն այստեղ ունեն գերեզմանոց, որը քաղաքային ընդհանուր գերեզմանոցի մի անկյունն է: Գերեզմանոցում գտնվող տապանաքարերի գրությունները՝ թվագրված 1820-ականներին, հայերեն են, 20-ականներից հետո արդեն՝ միայն ռուսերեն:

Ս. Կարապետյանի ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ Դաղստանի գրեթե ոչ մի գյուղում հայեր չեն բնակվում: Բացի Դերբենդից, մնացած հայաբնակ գյուղերի հայերը լքել են իրենց բնակավայրերն ու բնակություն հաստատել Հյուսիսային Կովկասում, մասնավորապես Ստավրոպոլի երկրամասի Եղեսիա եւ Ղարաբաղ գյուղերում, ինչպես նաեւ Բույնոնովսկ քաղաքում:

Ղարաբաղ գյուղում պահպանվել է միայն գերեզմանոցը, գերեզմանները հիմնականում 19-րդ դարի են, նախկինում գյուղն ունեցել է եկեղեցի, որն այժմ գոյություն չունի, ինչպես նաեւ գրադարան, սակայն ամբողջ գրականությունը ռուսերեն լեզվով է, ասաց Ս. Կարապետյանը:

Բանախոսը նկատել էր նաեւ, որ Դաղստանի բոլոր հայախոս հայերը դարձել են ռուսախոս, իսկ թուրքախոսները այդպիսին էլ մնացել են:

Ս. Կարապետյանը Դերբենդում հույս է ունեցել տեսնելու հին հուշարձաններ, սակայն հույսերը չեն արդարացել. «Դերբենդում կար միայն մի մզկիթ՝ Ջումա Մեջեթը, որը նախկինում հայկական եկեղեցի է եղել, ինչպես հայտնի է գրականությունից: Որքան էլ փորձեցի հասկանալ, թե եկեղեցին ո՞ր հատվածում էր, չկարողացա, քանի որ անճանաչելի էր դարձել: Դերբենդում էր գտնվում նաեւ Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին, որը մի քանի անգամ վերակառուցվել էր»:

Ս. Կարապետյանը տեղեկացրեց, որ Դերբենդում պահպանվել են Օրբելյանց եւ Սարուխանյանց գերդաստանների տները՝ այժմ դրանք պատկանում են ադրբեջանցիներին, որոնք սվաղել են, սակայն քաղաքային իշխանությունների ջանքերով Օրբելյանցների արձանագրությունը նորից բացվել է:

Հայկական ճարտարապետության ուսումնասիրման հիմնադրամի նախագահին ասաց, որ հին հուշարձաններ գտնելու իրենց սպասումները արդարացան միայն Դերբենդ գյուղի 17-րդ դարի գերեզմանոցում. «Այնտեղի տապանաքարերից երեւում էր, որ տեղի հայությունը մեծ աշխարհագրություն ընդգրկող տեղանքներից է եկել: Հատկանշական է, որ չափազանց օրինակելի գերեզմանոց էր»:

Բանախոսը անդրադարձավ Մոզդոկ քաղաքին, որտեղ երեք հայկական եկեղեցիներից միայն մեկն է պահպանվել, որը փայտաշեն է: Մոզդոկի հայ համայնքը ունի իր ակումբը՝ շնորհիվ Ռաֆիկ Վարդանովի, որտեղ կիրակի օրերին հայոց լեզվի դասընթացներ են անցկացվում, սակայն Ռ. Վարդանովը իր վրդովմունքն է արտահայտել Ս. Կարապետյանին՝ ասելով, որ երեխաները գալիս են, հայոց լեզու են սովորում, իսկ մեծահասակները նարդի եւ թուղթ են խաղում, մինչդեռ հենց ինքը՝ Վարդանովը, մեծահասակների համար թերթեր եւ ամսագրեր է գտել, իսկ նրանք անտեսում են դրանք:

Սամվել Կարապետյանը, անդրադառնալով հուշարձանների պահպանման խնդրին, ասաց, որ Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերություններում պետք է բարձրացվի այդ հարցը:

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

# ՉԺՀ ծովուժի առաջին ավիակիրը

## *Չինական պարեկանավեր վիճելի ջրատարածքում*

Չինաստանի ծովուժը ստացել է իր առաջին ավիակիրը՝ «Շի Լանը», որը նախկին ուկրաինական «Վարյագն» է: «Գլոբալ թայմս» թերթը հաղորդում է, որ նավի հանձնման արարողությունը տեղի է ունեցել կիրակի օրը Դալյան քաղաքի նավահանգստում (ՉԺՀ հյուսիս-արեւելք):



2012-ի օգոստոսի վերջերին «Շի Լանը» սկսել էր իր ծովային տասներորդ փորձարկումը, որի ընթացքում մասնավորապես փոխարինվել էին J-15 կործանիչի եւ Z8AEW ուղղաթիռի «լիաչափ մակետները»: Սեպտեմբերի սկզբներին չինական լրատվամիջոցներում հայտնվել էին ամերիկյան F-22 եւ F-35 հիշեցնող նոր կործանիչի լուսանկարները: Փորձագետների կարծիքով, նոր ռազմօդանավը կարող է օգտագործվել նաեւ «Շի Լան» ավիակրի վրա:

1988-ին ԽՍՀՄ-ում կառուցված «Վարյագ» ավիակիրը 1993-ին անցել էր Ուկրաինային: 1998-ին ուկրաինական կողմը ռազմանավը մետաղի ջարդոնի գնով վաճառել էր Չինաստանին՝ իբրեւ նավարկող խաղատուն վերասարքավորելու համար: Ավելի ուշ ՉԺՀ ծովուժը հայտարարել էր, որ մտադիր է ավիակիրը վերականգնել մարտական կիրառության նպատակով: Ռազմանավը ստացել էր «Շի Լան» անվանումը, եւ 2011-ի վերջերին սկսվել էին դրա ծովային փորձարկումները:

Ծովուժին ավիակրի հանձնումը տեղի ունեցավ Սենկակու (Դյաոյուդաո) կղզիների համար 1970-ականներից Ճապոնիայի հետ շարունակվող տարածքային վեճի պայմաններում: Այս տարվա սեպտեմբերի սկզբին Ճապոնիան մասնավոր սեփականատիրոջից գնեց եւ ազգայնացրեց վիճելի հինգ կղզիներից երեքը: Դրանից հետո սկսվեց լարվածության նոր փուլ: Կիոդո գործակալությունը երեկ հաղորդեց, որ չինական երեք պարեկանավ մտել են Սենկակու կղզիների տարածքային ջրեր, բայց մի քանի ժամ անց հեռացել են: Ֆրանսպրեսի տվյալներով, չինական չորս ուրիշ պարեկանավեր մնում են Ճապոնիայի տարածքային ջրերի մոտակայքում: Սենկակու կղզիների ծանծաղուտում կան ածխաջրածինների պաշարներ:

# ՕՐԱԿԱՐԳ

2012թ. սեպտեմբերի 27-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) կայանալիք վիճակախաղերի, շահումով խաղերի խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստի

▼ «Պետական լոտո» ՓԲԸ կողմից ներկայացված վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա ստանալու հայտի քննարկում:

▼ «Խաղի Արքա» ՍՊԸ կողմից ներկայացված շահումով խաղի կամ խաղատան կազմակերպման լիցենզիա ստանալու հայտի քննարկում:

*ՀՀ ֆինանսների նախարարություն*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ «2» որոշմամբ

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ԷՆ ՊԸԾՁԲ-12/09»

Պատվիրատուն՝ «ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երեւան, Մ.Մկրտչյան 5 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Շենքերի եւ կառույցների ներքին հարդարման եւ նորոգման ծառայությունների» ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարզեցված ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչեւ սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 10-րդ օրը (2012թ. սեպտեմբերի 29) ժամը 11:00-ն: Ընդ որում փաստաթղթային ձեւով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձեւով հրավերի տրամադրումն անվճար:

Էլեկտրոնային ձեւով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձեւով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երեւան, Մ.Մկրտչյան 5, 309 սենյակ հասցեով, փաստաթղթային /կամ էլեկտրոնային/ ձեւով մինչեւ սույն հայտարարությունը հրապարակման օրվանից հաշված 10-րդ օրվա (2012թ. սեպտեմբերի 29) ժամը 11:00-ն եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն հրավերի 1-ին մասի 12-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

*ՀՀ էկոնոմիկայի նախարարություն*


ВТБ

**«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ հարգելի հաճախորդներ,**

18.09.2012թ.-ից 06.10.2012թ. ընկած ժամանակահատվածում անցկացվող վերանորոգման աշխատանքների կապակցությամբ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն թիվ 35 մասնաճյուղի ֆիզիկական եւ իրավաբանական անձանց սպասարկումը կիրականացվի հետեւյալ մասնաճյուղում՝

- «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ «Շենգավիթ» մասնաճյուղ – հասցե. ք. Երեւան, Գ.Նժդեհի փողոց, 8 շենք:

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք զանգահարել Բանկի միասնական տեղեկատվական կենտրոն +(374 8000) 87-87 հեռախոսահամարով:

ՎՏԲ-Հայաստան Բանկի ղեկավարությունը հայցում է իր ներողամտությունը պատճառված ժամանակավոր անհարմարությունների համար:



**«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր**

**Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից**

▼ **Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն**

▼ **«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք*

*54-24-81, 54-74-81*


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 24.9.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: